



ՉԵԿՈՒՅՑ

«Սեռական շահագործումից և սեռական չարաշահումից երեխաներին զաշտովանելու մասին» Եվրոպայի խորհրդի (Լանզարոտեի) կոնվենցիայի կիրարկումը Նայաստանի Նանրադեպարտամենում. կատարված և կատարվելիք միջոցառումների վերաբերյալ

ՁԵԿՈՒՅՑ

**«Սեռական շահագործումից և սեռական
չարաշահումից երեխաներին պաշտպանելու
մասին» Եվրոպայի խորհրդի (Լանզարոպեի)
կոնվենցիայի կիրարկումը Հայաստանի
Հանրապետությունում.
կատարված և կատարվելիք միջոցառումների
վերաբերյալ**

ԵՐԵՎԱՆ 2018

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ քաղաքականության կրթաթոշակներ նախաձեռնության ծրագրի շրջանակներում: Հոդվածում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակի տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	5
Նախաբան	7
Համառոտագիր	7
Կոնվենցիայի նպատակները, խտրականության արգելման սկզբունքը և սահմանումները	10
Խտրականության արգելման սկզբունքը	10
Սահմանումներ	13
Կանխարգելիչ միջոցառումները	17
Երեխաների հետ աշխատող անձանց աշխատանքի ընդունումը, ուսուցումը և իրազեկության մակարդակի բարձրացումը	17
Երեխաների ուսուցումը	23
Կանխարգելիչ միջամտության ծրագրերը կամ միջոցառումները	29
Միջոցառումներ նախատեսված լայն հասարակության համար	30
Երեխաների մասնակցությունը	34
Մասնագիտացված և համակարգող մարմինները	36
Համակարգման և համագործակցության ազգային միջոցառումները	36
Պաշտպանական միջոցառումներ և օգնություն տուժածներին ..	40
Սեռական շահագործման կամ սեռական չարաշահման վերաբերյալ կասկածների մասին տեղեկացնելը	40
Օգնության տեղեկատվական ծառայությունները	42
Օգնություն տուժածներին	44
Միջամտության ծրագրերը կամ միջոցառումները	50
Քրեական իրավունքը	52
Սեռական չարաշահումը	53
Հանցագործություններ՝ կապված երեխայի մարմնավաճառության հետ	55
Հանցագործություններ՝ կապված մանկական պոռնոգրաֆիայի հետ	57

Հանցագործություններ՝ կապված պոռնոգրաֆիկ ներկայացումներում երեխայի մասնակցության հետ	59
Երեխաներին սեռական հարաբերությունների առաջարկ անելը	60
Իրավասությունը	61
Հավաքական պատասխանատվություն և պատժամիջոցներն ու միջոցառումները	63
Ծանրացուցիչ հանգամանքները	64
Հետաքննությունը, դատական հետապնդումը և ընթացակարգային օրենսդրությունը	65
Սկզբունքները և պաշտպանության ընդհանուր միջոցառումները	65
Վաղեմության ժամկետը	69
Երեխայի հետ հարցաքննությունները	70
Քրեական դատավարությունները	75
Եզրակացություններ	77
Առաջարկություններ	78
Իրավական բնույթի առաջարկություններ.	78
Քաղաքականության բնույթի առաջարկություններ.....	80
Կազմակերպչական բնույթի առաջարկություններ.	81
Համակցված բնույթի առաջարկություններ.	82
Օգտագործված գրականության ցանկ.....	84

Ներածություն

Հետազոտության հիմնական նպատակն է բացահայտել «Սեռական շահագործումից և սեռական չարաշահումից»¹ երեխաներին պաշտպանելու մասին»² Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով³ նախատեսված և Հայաստանի Հանրապետության կողմից կատարված գործողությունների և նախաձեռնությունների շրջանակը, ինչպես նաև վերհանել այն հիմնական հարցերը և առաջնային խնդիրները, որոնք խոչընդոտում են կոնվենցիայի վավերացմանը և/կամ կիրարկմանը: Վերջինս կնպաստի Կոնվենցիայի կատարումն ապահովող միջոցառումների իրականացման պլանավորմանը Կոնվենցիայի վավերացման պարագայում:

Նշված նպատակին հասնելու համար ոլորտը կարգավորող օրենսդրության ուսումնասիրությունն իրականացվել է որակական և քանակական մեթոդներով՝ իրավական փաստաթղթերի վերլուծության⁴, վիճակագրական տվյալների և փորձագետների հարցազրույցների միջոցով՝ հաշվի առնելով նրանց փորձառությունն ու կառույցի դերը տվյալ ոլորտում:

Ուսումնասիրության և վերլուծության են ենթարկվել ոլորտին առնչվող միջազգային և ներպետական օրենսդրությունը, բացատրական զեկույցները, Լանզարոտեի կոնվենցիայի իրականացման և մոնիթորինգային զեկույցները, Եվրոպայի խորհրդի անդամ երկրների լավագույն փորձը և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի

¹Կոնվենցիան կիրառում է չարաշահում եզրույթը, սակայն հայերեն թարգմանություններում կիրառվում են թե՛ «բռնություն», թե՛ «չարաշահում» եզրույթները: Տե՛ս, հաջորդ կետ:

²Նշված կոնվենցիայի տարբեր թարգմանություններում կիրառվում են տարբեր եզրույթներ, բայց այս զեկույցի համար հիմք է հանդիսացել ԵԽ-ի կայքէջում պաշտոնական անգլերեն տարբերակի տառացի թարգմանությունը:

³ Այսուհետ՝ Լանզարոտեի կոնվենցիա կամ Կոնվենցիա:

⁴Սույն ուսումնասիրության իրավական կարգավորումներին առնչվող եզրակացությունները և վերլուծությունը հիմնված են 2018 թվականի հունվար-մայիս ամիսներին գործող իրավական ակտերի և պրակտիկայի վրա:

(այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպերը:

Վերլուծության են ենթարկվել Լանզարոտեի կոնվենցիայի բոլոր հոդվածները, սակայն, հաշվի առնելով զեկույցի ծավալի սահմանափակումները և որոշ հոդվածների՝ հետազոտության նպատակների առնչության անուղղակիությունը, վերլուծության ընթացքում վեր են հանվել կարգավորման անհրաժեշտություն ունեցող խնդիրներն ու բացթողումները կամ Հայաստանի համար առավել արդիական հոդվածները: Վերլուծության արդյունքում մշակվել են Լանզարոտեի կոնվենցիայի վավերացման համար անհրաժեշտ միջոցառումներ:

Հետազոտությանը նպաստելու և մասնակցելու համար երախտագիտություն ենք հայտնում այն կառույցների ներկայացուցիչներին, որոնց հետ հարցազրույցների արդյունքում պատրաստվեց զեկույցը, մասնավորապես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի, ՀՀ արդարադատության նախարարության, Անչափահասների արդարադատության խորհրդի, Երեխաների պաշտպանության ցանցի, Հանրային պաշտպանի գրասենյակի, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ դատախազության, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, «Վորլդ Վիժն» Հայաստանի, «Արևամանուկ» ընտանիքի և երեխայի խնամքի հիմնադրամի, «Ապահով համացանց Հայաստան» ծրագրի, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի, Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի, «Հույս և օգնություն» ՀԿ-ի, «Սոցիալական արդարություն» ՀԿ-ի և «ԷԳՈ» զարգացման մանկական կենտրոնի ներկայացուցիչներին:

Զեկույցը պատրաստվել է երեխայի իրավունքների պաշտպանության փորձագետներ Ամալյա Ոսկանյանի և Դավիթ Թումասյանի կողմից:

Լիահույս ենք, որ հետազոտության արդյունքում հաջողվել է կազմել արժեքավոր զեկույց, որը կնպաստի երեխայի իրավունքների պաշտպանության խթանմանը, երեխայի իրավունքներով զբաղվող կառույցների աշխատանքներին և Կոնվենցիայի վավերացմանը:

Նախաբան

Հայաստանը Լանգարոտեի կոնվենցիան ստորագրել է 2010 թվականի սեպտեմբերի 29-ին, սակայն առ այսօր չի վավերացրել: Սույն հետազոտությունն իրավական հիմնավորմամբ կներկայացնի Կոնվենցիան վավերացնելու դեպքում անհրաժեշտ օրենսդրական, կազմակերպչական, քաղաքականության և համակցված բնույթի փոփոխությունները և գործողությունները: Մասնավորապես հետազոտությունը կանդրադառնա հետևյալ հարցերին՝ Հայաստանում երեխաներին սեռական շահագործումից և չարաշահումից պաշտպանության ոլորտը կարգավորող արդի իրավական դաշտին, Հայաստանի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների կատարմանը և ընթացող բարեփոխումներին, Հայաստանում երեխաների նկատմամբ կատարված սեռական հանցագործությունների վիճակագրությանը, ոլորտի խնդիրներին և մարտահրավերներին՝ հիմք ընդունելով ոլորտի մասնագետների կարծիքը, միջազգային առավել ընդունելի լավագույն փորձը և առաջարկվող իրավական ու համակարգային լուծումները և կներկայացվեն Կոնվենցիայի վավերացմանը խոչընդոտող նորմերի կարգավորմանն ուղղված առաջարկություններ:

Համառոտագիր

2018թ.-ի հունիսի դրությամբ Եվրոպայի Խորհրդի 47 երկրից 44-ը վավերացրել են Կոնվենցիան՝ բացառությամբ Հայաստանի, Իռլանդիայի և Ադրբեջանի: Միանալով մի շարք միջազգային և տարածաշրջանային կոնվենցիաների⁵, Հայաստանը որոշ քայլեր է ձեռնարկել ե-

⁵Մասնավորապես՝ «ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան (1989թ.), ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին» կամ-ընտիր արձանագրությունը (2000թ.), ԱՄԿ-ի «Մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի արգելման և անհապաղ վերացման մասին» թիվ 182 կոնվենցիան (1999թ.), Եվրոպայի խորհրդի վերանայված սոցիալական խարտիան (1996թ.),

րեխաներին սեռական շահագործումից և սեռական չարաշահումից պաշտպանելու ուղղությամբ, սակայն, վերջին տարիների վիճակագրությունը և միջազգային փորձի համադրությունը ցույց են տալիս, որ ձեռնարկած քայլերը բավարար չեն երեխաներին սեռական շահագործումից և չարաշահումից արդյունավետ պաշտպանելու համար:

Լանզարոտեի կոնվենցիան լրացնում է վերոնշյալ կոնվենցիաների տրամաբանությունը և նախատեսում երեխաների սեռական շահագործումից և սեռական չարաշահումից պաշտպանության նոր մոտեցումներ ու միջոցներ: Այն երեխայի սեռական շահագործման և սեռական չարաշահման դեմ պայքարին վերաբող ամենաարդիական և ամբողջական առաջին միջազգային իրավական փաստաթուղթն է, որտեղ տրվում է երեխայի նկատմամբ սեռական չարաշահման սահմանումը, ինչպես նաև սահմանվում է նոր հանցատեսակներ, որոնք պայմանավորված են տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների և տուրիզմի ոլորտների զարգացմամբ: Կոնվենցիան հիմնված է այսպես կոչված 4P-ի սկզբունքների⁶ վրա, որոնք նպատակաուղղված են սեռական շահագործման և սեռական չարաշահման կանխարգելմանը, սեռական շահագործման և սեռական չարաշահման զոհ դարձած երեխաների պաշտպանությանը, հանցագործների հետապնդմանը և համագործակցության խթանմանը:

Ինչպես նշվել է վերևում, Լանզարոտեի կոնվենցիան սահմանում է մի շարք կանխարգելիչ գործողություններ, որոնք պարտադիր են վավերացնող կողմերի համար, այդ թվում՝ երեխաների հետ աշխատող անձանց աշխատանքի ընդունումը, ուսուցումը և իրազեկության մակարդակի բարձրացումը, սեռական շահագործման և սեռական չարաշահման ռիսկերի և պաշտպանության մեխանիզմների մասին երեխաներին իրազեկումը, նրանց մասնակցության ապահո-

«Կիբերհանցագործությունների մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (2001թ.), «Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի գործողություններին մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (2005թ.):

⁶“4 P”- prevention, protection, prosecution and promotion (պաշտպանել, կանխարգելել, հետապնդել և համագործակցել):

վումը, հասարակության լայն շրջաններում իրազեկման, կանխարգելիչ միջամտության ծրագրերի իրականացումը կամ հանցագործներին և հանցագործություն կատարելու մտավախություն ունեցող անձանց ուղղված միջոցառումները: Կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Կոնվենցիայի վավերացման պարագայում, Հայաստանը դեռևս լրացուցիչ քայլեր պետք է ձեռնարկի վերը նշված կանխարգելիչ գործողություններն ապահովելու ուղղությամբ:

Կոնվենցիան սեռական շահագործման կամ սեռական չարաշահման զոհերին պաշտպանելու և հանցագործներին պատասխանատվության ենթարկելու համար վավերացնող կողմերին խրախուսում է լրացուցիչ այնպիսի միջոցառումների ձեռնարկման հարցում, ինչպիսիք են զոհերի աջակցությանն ուղղված կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի իրականացումը, թեժ գծերի ստեղծումը, սեռական շահագործման և սեռական չարաշահման վերաբերյալ կասկածների մասին հաղորդելը, ենթադրյալ հանցագործներին կամ տուժողներին ընտանեկան միջավայրից հեռացնելը: Ինչպես և կանխարգելման դեպքում, Կոնվենցիայի վավերացման պարագայում, Հայաստանը դեռևս քայլեր պետք է ձեռնարկի նաև սեռական շահագործման և սեռական չարաշահման զոհերի պաշտպանության և հանցագործներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ՝ Կոնվենցիայի պահանջներին համապատասխան:

Բացի վերոնշյալից, Կոնվենցիան պահանջում է վավերացնող կողմերին քրեականացնել երեխաների նկատմամբ կատարվող բոլոր սեռական հանցագործությունները: Թեև ներպետական օրենսդրությամբ Կոնվենցիայով նախատեսված հանցագործությունների մեծ մասը քրեականացված են, այնուամենայնիվ խնդիր է առաջանում որոշ արարքների քրեականացման և կիրառվող եզրույթների սահմանման հետ կապված: Անկախ Կոնվենցիայի վավերացումից ներպետական օրենսդրությամբ պետք է սահմանվեն տարաբնույթ եզրույթներ, որոնց բացակայությունը խոչընդոտ է որոշակիության սկզբունքի տեսանկյունից, ինչպես նաև միատեսակ կիրառման և ամփոփ վիճակագրություն ստանալու համար:

Կոնվենցիայի հավելյալ արժեքներից են Կողմերի կոմիտեի մշտադիտարկման մեխանիզմը, միջազգային համագործակցությունը և սեռական հանցագործությունների համար դատապարտված անձանց վերաբերյալ ազգային տվյալների գրանցումը և պահպանումը: Հայաստանի կողմից Կոնվենցիայի վավերացումը կնպաստի միջազգային համագործակցության ընդլայնմանը և փորձի ու տեղեկատվության փոխանակմանը:

Կոնվենցիայի նպատակները, խտրականության արգելման սկզբունքը և սահմանումները

Կոնվենցիան ունի երեք հիմնական նպատակ⁷

- կանխարգելել երեխաների սեռական շահագործումը և սեռական չարաշահումը ու պայքարել դրա դեմ,
- պաշտպանել սեռական շահագործումից և սեռական չարաշահումից տուժած երեխաների իրավունքները,
- նպաստել ազգային և միջազգային համագործակցության զարգացմանը երեխաների սեռական շահագործման և սեռական չարաշահման դեմ մղվող պայքարում:

խտրականության արգելման սկզբունքը⁸

Իրավահավասարության և խտրականության արգելման սկզբունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ⁹ ու ՀՀ մի շարք օրենսգրքերով և օրենքներով: Մշակման փուլում է գտնվում «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Քանի որ ինչպես Կոնվենցիայով, այնպես էլ Մարդու իրավունքների եվրոպա-

⁷ Տե՛ս՝ Կոնվենցիայի 1-ին հոդվածը:

⁸ Տե՛ս՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածը:

⁹ Տե՛ս՝ ՀՀ Սահմանադրության 28-30 հոդվածները:

կան կոնվենցիայով և դրա թիվ 12 Արձանագրությամբ նախատեսված խտրականության արգելման հիմքերը նույնն են, ապա Կոնվենցիայի վավերացման պարագայում Սահմանադրության հետ համապատասխանեցման խնդիրներ չեն առաջանա: Ընդ որում, Կոնվենցիայով նախատեսված խտրականության արգելման երեք այլ հիմքերը՝ սեռական կողմնորոշումը, առողջական վիճակը և հաշմանդամությունը, նույնպես համահունչ են ՀՀ Սահմանադրությանը, քանզի վերջինս նախատեսում է խտրականության արգելք նաև այնպիսի հիմքերով, ինչպիսիք են հաշմանդամությունը, ինչպես նաև անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքները: Խտրականության այլ հնարավոր դեպքերը պետք է մեկնաբանվեն և գնահատական ստանան դատական պրակտիկայում՝ ընդհանուր հավասարության շրջանակներում, հաշվի առնելով մարդու իրավունքների վերաբերյալ վավերացրած միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների փորձը¹⁰:

Չնայած վերոշարադրյալին, այնուամենայնիվ խնդիրներ են արձանագրվել օրենսդրական բացերի, խտրականության եզրույթի բացակայության և խտրականության տեսակների սահմանման, ինչպես նաև արդյունավետ պաշտպանության մեխանիզմների ներդրման առումով, ինչը փորձ է արվում կարգավորել «Իրավահավասարության ապահովման մասին» նախագծված ՀՀ օրենքով:

Մտահոգիչ է նաև վիճակագրությունը, քանզի վերջին տարիների ընթացքում ՀՀ-ում էապես ավելացել է երեխաների դեմ ուղղված սեռական հանցագործությունների թիվը, ընդ որում տուժողների մեծ մասն իգական սեռի ներկայացուցիչներ են, սոցիալապես անապահով, խոցելի, առավել անբարենպաստ իրավիճակներում հայտնված կամ մարզերում ապրող երեխաներ: Կատարված ուսումնասիրությունների համաձայն՝ 2015թ.-ին սեռական հանցագործության տուժող է ճանաչվել

¹⁰ Տես՝ 2015թ.-ի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածը: Տես՝ «Համառոտ պարզաբանումներ», Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Երևան, 2016թ., էջ 52: Տես՝ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մաս: Տես՝ ՀՀ դատական օրենսգրքի 6-րդ հոդվածի, 2-րդ մասը (ընդունվել է 2018 թվականի փետրվարի 7-ին):

76 երեխա¹¹, 2016թ.-ին՝ 115¹², իսկ 2017թ.-ին՝ 113¹³: Երեխաների մեծամասնությունը ՀՀ քաղաքացիներ էին, և գերակշիռ մասը ազգությամբ հայեր: Սակայն, կային նաև ազգությամբ եզդի երեխաներ (2015թ.-ին՝ 10 երեխա, 2016թ.-ին և 2017թ.-ին՝ 14-ական): Միայն 2016թ.-ին գրանցված մի դեպքում տուժող եղել է Մոլդովայի քաղաքացի¹⁴: Փախստական երեխաների նկատմամբ դեպքեր չեն արձանագրվել:

Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների թիվը նույնպես մտահոգիչ է: Այսպես՝ 2015թ.-ի տուժող երեխաներից միայն 56-ն էին համարվում աշակերտներ, 2016թ.-ին՝ 53-ը, իսկ 2017թ.-ին՝ 40-ը: Այսինքն՝ երեխաների դպրոց չհաճախելու հանգամանքը նպաստել է հակաիրավական կամ հակասոցիալական միջավայրում նրանց ներգրավմանը:

Ըստ հարցազրույցի մասնակիցների, հասարակությունը, իսկ երբեմն նաև իրավապահ մարմինները խտրական վերաբերմունք են ցուցաբերում տուժող երեխաների հանդեպ՝ կախված նրանց տարիքից կամ սեռից: Բռնության ենթարկված ավելի բարձր տարիքի աղջիկներին երբեմն վերաբերվում են պարսավանքով և քննադատությամբ՝ փորձելով նրանց մոտ առաջացնել իրենց վարքագծով և ապրելակերպով պայմանավորված մեղքի զգացմունք:

Շերևաբար անհրաժեշտ է ձեռնարկել խտրականության վերա-

¹¹ Հանցագործության կատարման պահին տուժողներից 4-ը եղել են 4 տարեկան, 2-ը՝ 5 տարեկան, 3-ը՝ 6 տարեկան, 2-ը՝ 7 տարեկան, 1-ը՝ 9-ը տարեկան, 4-ը՝ 12 տարեկան, 2-ը՝ 13 տարեկան, 13-ը՝ 14 տարեկան, 40-ը՝ 15 տարեկան, 2-ը՝ 16 տարեկան, 3-ը՝ 17 տարեկան:

¹² Հանցագործության կատարման պահին տուժողներից 2-ը եղել են 5 տարեկան, 2-ը՝ 6 տարեկան, 1-ը՝ 7 տարեկան, 4-ը՝ 8 տարեկան, 3-ը՝ 9 տարեկան, 2-ը՝ 10 տարեկան, 5-ը՝ 11 տարեկան, 1-ը՝ 12 տարեկան, 7-ը՝ 13 տարեկան, 17-ը՝ 14 տարեկան, 48-ը՝ 15 տարեկան, 20-ը՝ 16 տարեկան, 3-ը՝ 17 տարեկան:

¹³ Հանցագործության կատարման պահին տուժողներից 2-ը եղել են 5 տարեկան, 1-ը՝ 6 տարեկան, 5-ը՝ 7 տարեկան, 3-ը՝ 8 տարեկան, 1-ը՝ 9 տարեկան, 3-ը՝ 10 տարեկան, 2-ը՝ 11 տարեկան, 2-ը՝ 12 տարեկան, 5-ը՝ 13 տարեկան, 15-ը՝ 14 տարեկան, 29-ը՝ 15 տարեկան, 28-ը՝ 16 տարեկան, 17-ը՝ 17 տարեկան:

¹⁴ Մանրամասն տե՛ս՝ 2015-2016 թվականների սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն ու դրանց վարույթի առանձնահատկությունները, Երևան, 2017: Իսկ 2017թ.-ի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է առձեռն՝ հարցազրույցի ժամանակ:

բերյալ իրազեկության բարձրացմանն ուղղված կրթական և վերապատրաստման ծրագրեր և քարոզարշավներ թե՛ երեխայի հետ աշխարհը մասնագետների, և թե՛ հասարակության լայն շրջանների համար¹⁵ ու հստակեցնել այս ոլորտում կիրառվող սահմանումները:

Սահմանումներ¹⁶

ՀՀ օրենսդրության համաձայն երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր ոք՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նա օրենքով սահմանված կարգով գործունակություն է ձեռք բերում կամ գործունակ է ճանաչվում ավելի վաղ¹⁷: Թեև ինքնին սահմանման հետ կապված խնդիր չի առաջանում և այն համահունչ է Կոնվենցիային, այնուամենայնիվ որոշակի խնդիր է առաջանում «երեխա» և «անչափահաս» եզրույթների հարաբերակցության հետ, որոնք հաճախ օգտագործվում են որպես հոմանիշներ, ինչպես նաև «մանկական պոռնոգրաֆիա»¹⁸, «մանկահասակ»¹⁹, «փոքրահասակ»²⁰, «անչափահաս երեխա»²¹ տերմինները ՀՀ քրեական օրենսգրքում (այսուհետ՝ քր.

¹⁵Տե՛ս՝ նաև ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի կատարման վերաբերյալ ՀՀ հինգերորդ և վեցերորդ համատեղ պարբերական զեկույցի ամփոփիչ դիտարկումները, 2016թ.՝ <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N16/402/28/PDF/N1640228.pdf?OpenElement> (վերջին անգամ դիտվել է 25.04.18թ.):

¹⁶ Տե՛ս՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածը:

¹⁷ Տե՛ս՝ Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքի 1-ին հոդվածը:

¹⁸Տե՛ս՝ Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրությունը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24543>, (վերջին անգամ դիտվել է 25.04.18թ.):

¹⁹ Տե՛ս՝ ՀՀ քրեական օրենսգրքը, որն ընդունվել է 2003 թվականի ապրիլի 18-ին (վերջին անգամ փոփոխվել է 2018 թվականի մարտի 7-ին):

²⁰ Տե՛ս՝ Կիբեռհանցագործությունների մասին կոնվենցիայի 9-րդ հոդվածի 3-րդ մասը, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=48028> (վերջին անգամ դիտվել է 25.04.18թ.):

²¹ Տե՛ս՝ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 7-րդ մասը, (ընդունվել է 2018 թվականի փետրվարի 9-ին):

որ.), ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի (այսուհետ՝ ԵԻԿ) և կից արձանագրությունների հայալեզու տարբերակներում (պաշտոնական թարգմանություններում) և մի շարք այլ իրավական ակտերում կիրառելու առնչությամբ: Ուստի թյուրըմբռնումից խուսափելու նպատակով ցանկալի է վերանայել տարբեր տերմինների կիրառումը ներպետական իրավական ակտերում, իսկ անհրաժեշտության դեպքում տարանջատելու նպատակով տալ հստակ սահմանում, ինչպես նաև վերանայել Կոնվենցիայի և կից արձանագրության հայալեզու տարբերակները, քանի որ սխալ թարգմանությունը կարող է հանգեցնել բովանդակության թյուրընկալման:

Քրեական պատասխանատվության ենթակա է այն անձը, ում 16 տարին²², իսկ որոշ հանցագործությունների դեպքում՝ 14 տարին²³, լրացել է նախքան հանցանք կատարելը:

Սեռական հարաբերություններին համաձայնություն տալու տարիքը 16 տարեկանն է, սակայն ամուսնությունը կարող է կնքվել 18 տարին լրացած անձանց միջև: Օրենքը թույլ է տալիս բացառություններ 16 և 17 տարեկան անձանց համար, եթե առկա է ծնողի համաձայնությունը և ամուսնացող մյուս անձը առնվազն 18 տարեկան է²⁴: Սակայն, ՀՀ ընտանեկան օրենսգրքով (այսուհետ՝ ԸՕ) սահմանված այս բացառությունները հակասում են միջազգային օրենսդրությանը, քանի որ Երեխայի ամուսնությունը կամ վաղ ամուսնությունը²⁵ դիտվում է որպես

²² Տե՛ս՝ ՀՀ քր. օր.-ի 24-րդ հոդվածի 1-ին մաս:

²³ Տե՛ս՝ ՀՀ քր. օր.-ի 24-րդ հոդվածի 2-րդ մաս:

²⁴ Տե՛ս՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 10-րդ հոդվածը:

²⁵ Child marriage, also referred to as early marriage, is any marriage where at least one of the parties is under 18 years of age. See Joint general recommendation No. 31 of the Committee on the Elimination of Discrimination against Women/general comment No. 18 of the Committee on the Rights of the Child on harmful practices, para 20-23 (<https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N14/627/78/PDF/N1462778.pdf?OpenElement>).

երեխայի իրավունքների ոտնահարում²⁶: Օրենքով սահմանված նման բացառությունները հնարավորություն են տալիս նաև քողարկելու երեխայի հանդեպ սեռական բռնությունը և խրախուսելու վնասակար պրակտիկայի դրսևորումները: Հետևաբար անհրաժեշտ է վերանայել ՀՀ ԸՕ-ի 10-րդ և 11-րդ հոդվածները: Ավանդույթներով պայմանավորված վաղ ամուսնությունների հարցի շուրջ՝ մասնավորապես եզրիական համայնքում, իր մտահոգությունն է հայտնել նաև Երեխայի իրավունքների կոմիտեն²⁷:

Մտահոգիչ է նաև երեխաների հետ փաստական ամուսնության դեպքերի ավելացումը: Փաստական ամուսնությունների ստույգ թիվը հայտնի չէ, քանի որ ամուսնության երկու կողմն էլ և նրանց մերձավոր ազգականները շահագրգռված են չհրապարակել այդ տեղեկատվությունը: ՀՀ քննչական կոմիտեի հրապարակած տվյալների համաձայն՝ 2015թ.-ին հանցագործության կատարման պահին կասկածյալներից/մեղադրյալներից 30-ը տուժողի հետ եղել են փաստացի ամուսիններ (կասկածյալների/մեղադրյալների 31,6%), 2016թ.-ին՝ 43-ը (38,1%), իսկ 2017թ.-ին՝ 29-ը (31%)²⁸:

Ըստ Կոնվենցիայի տուժողն այն երեխան է, ով ենթարկվել է Կոնվենցիայում թվարկված հանցագործություններից որևէ մեկին²⁹: ՀՀ

²⁶ Տե՛ս՝ Child protection from violence, exploitation and abuse: Child marriage. https://www.unicef.org/protection/57929_58008.html (վերջին անգամ դիտվել է 28.04.18թ.):

²⁷ Կոմիտեն կոչ է արել մշակելու և իրականացնելու իրազեկության բարձրացման համապարփակ ծրագրեր՝ նվիրված իգական սեռի երեխաների առողջության, կրթության և զարգացման իրավունքների վրա վաղ ամուսնության բացասական հետևանքներին, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ծնողներին և համայնքային առաջնորդներին: Տե՛ս՝ Երեխայի իրավունքների հանձնաժողովի 2013թ.-ի ամփոփիչ դիտարկումները ՀՀ երրորդ և չորրորդ համատեղ պարբերական զեկույցի վերաբերյալ, 27-28 կետեր:

²⁸ Մանրամասն տե՛ս՝ «2015-2016 թվականների սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն ու դրանց վարույթի առանձնահատկությունները», Երևան, 2017թ.: Իսկ 2017թ.-ի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է առձեռն՝ հարցազրույցի ժամանակ:

²⁹ Տե՛ս՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի “գ” կետը:

ներպետական օրենսդրությունը համահունչ է այս ձևակերպմանը³⁰: Կոնվենցիայի բացատրական զեկույցը նշում է, որ սեռական շահագործման կամ սեռական չարաշահման փաստերը չպետք է հաստատվեն նախքան երեխայի տուժող համարվելը³¹:

«Հ օրենսդրությամբ կիրառվում են և՛ «տուժող», և՛ «զոհ» եզրույթները: «Տուժող» եզրույթը հիմնականում կիրառվում է քրեադատավարական համատեքստում, իսկ երբ անձին անհրաժեշտ է տրամադրել սոցիալ-հոգեբանական կամ այլ աջակցություն և օգնություն՝ կիրառելի է «զոհ» եզրույթը: **Այս առումով ներպետական օրենսդրությունը մասնակի համահունչ է:** Միայն սեռական շահագործման առնչությամբ ունենք համապատասխան կարգավորման կարիք, քանզի մարդուն թրաֆիքինգի կամ շահագործման զոհ, կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչելը և քրեադատավարական նորմերին համապատասխան նրան տուժող ճանաչելը տարբեր նպատակներ հետապնդող գործընթացներ են և որևէ կերպ չեն կարող բխել միմյանցից, սակայն դրանց համար հիմք համարվող տեղեկությունները կարող են փոխադարձաբար օգտագործվել, եթե այդ տեղեկությունների օգտագործումն արգելված չէ օրենքով³²: Սեռական չարաշահման առնչությամբ նման ձևակերպում օրենսդրորեն նախատեսված չէ, չնայած գործնականում զոհերի հետ աշխատող հասարակական կազմակերպությունները կիրառում են այդ մոտեցումը:

³⁰Տե՛ս՝ ՀՀ ՔԴՕ-ի 58-րդ հոդվածը(ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, վերջին անգամ փոփոխվել է 2018 թվականի մարտի 23-ին): «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքը (ընդունվել է 2017 թվականի դեկտեմբերի 13-ին), ինչպես նաև 'Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին' ՀՀ օրենքը (ընդունվել է 2014 թվականի դեկտեմբերի 17-ին, վերջին անգամ փոփոխվել է 2018 թվականի մարտի 23-ին):

³¹Տե՛ս՝ կետ 51,
<https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016800d3832> (վերջին անգամ դիտվել է 20.04.18թ.):

³²Տե՛ս՝ 'Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին' ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը:

Հերևաբար սեռական բռնության զոհերի համար նույնպես պետք է նախապես փորձերակված մոտեցում, ինչպես նախապես-ված է օրենսդրությամբ մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման զոհերի համար:

Կանխարգելիչ միջոցառումները

Կոնվենցիայի կանխարգելիչ միջոցառումները նախատեսում են այնպիսի գործողություններ, ինչպիսիք են երեխաների հետ աշխատող անձանց աշխատանքի ընդունումը, ուսուցումը և իրազեկության մակարդակի բարձրացումը, երեխաների իրազեկումը սեռական շահագործման և սեռական չարաշահման ռիսկերի մասին և պաշտպանության մեխանիզմները, երեխաների մասնակցությունը, հասարակության լայն շրջանների իրազեկումը, մասնավոր հատվածի և լրատվամիջոցների հետ աշխատանքները, կանխարգելիչ միջամտության ծրագրերը կամ միջոցառումները հանցագործների և հանցագործություն և կատարելու մտավախություն ունեցող անձանց համար:

Երեխաների հետ աշխատող անձանց աշխատանքի ընդունումը, ուսուցումը և իրազեկության մակարդակի բարձրացումը³³

Կոնվենցիան՝ որպես կանխարգելիչ միջոց, վավերացնող կողմերից պահանջում է վերահսկողություն սահմանել այն անձանց նկատմամբ, ովքեր մասնագիտության բերումով³⁴ կանոնավոր շփումներ են

³³ Տե՛ս՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածը:

³⁴ Կրթության, առողջապահության, սոցիալական պաշտպանության, դատական և իրավապահ ոլորտները, որոնք առնչվում են սպորտի, մշակույթի և ազատ ժամանակի կազմակերպման խնդիրների հետ:

ունենում երեխաների հետ՝ երեխաների սեռական շահագործման կամ սեռական չարաշահման համար նշված թեկնածուների դատապարտված լինելու դեպքերը բացառելու նպատակով:

Հարցազրույցների բոլոր մասնակիցները կարևորեցին նման կարգավորման օրենսդրական անհրաժեշտությունը: Չնայած որոշ պաշտոնների կամ մասնագիտությունների առնչությամբ համապատասխան օրենսդրական կարգավորումներ արդեն իսկ առկա են, սակայն երեխաների հետ աշխատող ոչ բոլոր մասնագիտությունների համար են կիրառվում այդ կարգավորումները:

Համաձայն ՀՀ օրենսդրության՝ այն անձը, ով դատապարտվել է հանցագործության համար, և ում դատվածությունը մարված կամ հանված չէ, կամ դատապարտվել է դիտավորյալ հանցագործություն կատարելու համար, կամ ազատությունից զրկելու հետ կապված պատիժ է կրել՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից, կամ ում նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, կամ դատական կարգով զրկվել է քաղաքացիական կամ այլ ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից չեն կարող լինել դատավորի հավակնորդի թեկնածու³⁵, նշանակվել դատավոր³⁶, ծառայության անցնել քննչական կոմիտեում³⁷, հատուկ քննչական ծառայությունում³⁸ և ոստիկանությունում³⁹, լինել փաստաբան⁴⁰, ինչպես

³⁵ Տե՛ս՝ ՀՀ դատական օրենսգրքի 97-րդ հոդվածի 6-րդ մասը (ընդունվել է 2018 թվականի փետրվարի 7-ին):

³⁶ Տե՛ս՝ ՀՀ դատական օրենսգրքի 112.1-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 6-րդ մասերը:

³⁷ Տե՛ս՝ «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը (ընդունվել է 2014 թվականի մայիսի 19-ին, վերջին անգամ փոփոխվել է 2018 թվականի մարտի 23-ին):

³⁸ Տե՛ս՝ «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը (ընդունվել է 2007 թվականի նոյեմբերի 28-ին, վերջին անգամ փոփոխվել է 2018 թվականի մարտի 23-ին):

³⁹ Տե՛ս՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասը (ընդունվել է 2002 թվականի հուլիսի 3-ին, վերջին անգամ փոփոխվել է 2018 թվականի մարտի 23-ին):

նան նշանակվել դատախազ⁴¹: Նույն սահմանափակումը գործում է քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց⁴², ուսումնական հաստատության տնօրենի⁴³, մանկավարժական աշխատանքի⁴⁴ հավակնորդների, ինչպես նաև որդեգրելու իրավունք ունեցող անձանց և խնամատար ծնող դառնալու ցանկություն ունեցող անձանց⁴⁵, սոցիալական աշխատանքի մասնագետի համար⁴⁶:

Սակայն «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև օրենքի նախագիծը⁴⁷, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը (բուժաաշխատողներին ներկայացվող պահանջները), «Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքը և «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքը նման երաշխիքներ չեն սահմանում: Նման երաշխիքներ չեն սահմանվում նաև խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անդամների համար⁴⁸: Իսկ ինչ վերաբերում է խնամակալության

⁴⁰ Տե՛ս՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը (ընդունվել է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին, վերջին անգամ փոփոխվել է 2017 թվականի դեկտեմբերի 13-ին):

⁴¹ Տե՛ս՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մաս (ընդունվել է 2017 թվականի նոյեմբերի 17-ին):

⁴² Տե՛ս՝ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը (ընդունվել է 2001 թվականի դեկտեմբերի 4-ին, վերջին անգամ փոփոխվել է 2018 թվականի մարտի 23-ին):

⁴³ Տե՛ս՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը (ընդունվել է 2009 թվականի հուլիսի 10-ին, վերջին անգամ փոփոխվել է 2018 թվականի մարտի 23-ին):

⁴⁴ Տե՛ս՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասը:

⁴⁵ Տե՛ս՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 116-րդ հոդվածի 1-ին մասը և 138-րդ հոդվածի 1-ին մասը (ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, վերջին անգամ փոփոխվել է 2017 թվականի դեկտեմբերի 21-ին):

⁴⁶ Տե՛ս՝ «Սոցիալական աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագծի 8րդ հոդվածի 6-րդ մասը (վերջին անգամ դիտվել է 26.04.18թ.՝ <https://www.e-draft.am/projects/755>):

⁴⁷ Տե՛ս՝ «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագիծը (վերջին անգամ դիտվել է 26.04.18թ.՝ <https://www.e-draft.am/projects/524/about>):

⁴⁸ Տե՛ս՝ Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն

և հոգաբարձության հանձնաժողովի նախագահներին, ապա քանի որ նրանք համարվում են համայնքների ղեկավարներ, ապա նրանց վրա տարածվում է «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որտեղ նման դրույթ նույնպես նախատեսված է⁴⁹: Նման օրենսդրական պահանջ նախատեսված չէ երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող պետական հաստատությունների, ինչպես նաև երեխայի իրավունքների պաշտպանությամբ զբաղվող և այդ ոլորտում խնամք կամ այլ ծառայություններ մատուցող հասարակական կազմակերպությունների և բարեգործական կառույցների աշխատակիցների և կամավորների համար:

Քննարկվող հարցի լուծում որոշակի ժամկետով նախատեսում է ՀՀ քր. օր.-ը, որտեղ պաշտոնական դիրքի օգտագործմամբ երեխայի թրաֆիքինգի կամ շահագործման և սեռական հանցագործությունների համար որպես լրացուցիչ պատիժ նախատեսված է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը⁵⁰: Այս լուծումը սահմանափակվում է որոշակի ժամկետով է, քանի որ նշանակվում է առավելագույնը 3 տարի ժամկետ⁵¹:

Այս ամենից բխում է, որ Կոնվենցիայի վավերացումից հետո, անհրաժեշտություն կառաջանա նմանատիպ երաշխիքներ սահմանե-

որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն ՀՀ կառավարության որոշումը:

⁴⁹Տե՛ս՝ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը (ընդունվել է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին, վերջին անգամ փոփոխվել է 2015 թվականի նոյեմբերի 24-ին):

⁵⁰ Տե՛ս՝ ՀՀ քր. օր.-ի 132.2-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, 138-րդ հոդվածի 3-րդ մասը, 139-րդ հոդվածի 3-րդ մասը, 141-րդ հոդվածի 3-րդ մասը, 142-րդ հոդվածի 3-րդ մասը:

⁵¹ Հարկ է նշել, որ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը կարգապահական գումարտակում պահելու, կալանքի կամ որոշակի ժամկետով ազատագրկման հետ միասին որպես լրացուցիչ պատիժ նշանակելիս լրացուցիչ պատժի ժամկետը տարածվում է հիմնական պատիժը կրելու ամբողջ ժամանակի վրա: Ընդ որում, լրացուցիչ պատժի ժամկետը հաշվարկվում է հիմնական պատիժը կրելուց հետո: Մնացած դեպքերում լրացուցիչ պատժի ժամկետը հաշվարկվում է դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից:

լու նաև այս իրավական ակտերով: Հեղևաբար օրենսդրությունը վերանայման կարիք ունի այդ մասով, որպեսզի երեխաների հետ աշխատող անձանց դատվածության ստուգման գործընթացը և դրա հաշվի առնելն աշխատանքի ընդունելիս լինի պարտադիր պայման:

Կանխարգելիչ միջոցները գործնականում կիրառվում է որոշ միջազգային կազմակերպությունների կողմից, օրինակ՝ «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» կազմակերպության կողմից, որտեղ անձնակազմի հավաքագրումն ու ընտրությունն իրականացվում է ապահովելով համապատասխան ստուգումներ և ընթացակարգեր, ինչը հնարավորություն է տալիս բացահայտելու երեխաների հետ աշխատելու համար անհամապատասխան անձանց⁵²:

Ինչ վերաբերում է երեխաների հետ աշխատող անձանց ուսուցմանը և իրազեկության մակարդակի բարձրացմանը, ապա ՀՀ ոստիկանության կրթահամալիրը, Արդարադատության ակադեմիան, Փաստաբանական դպրոցը, Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտը, Առողջապահության ազգային ինստիտուտը, Կրթության ազգային ինստիտուտը և երեխաների հետ աշխատող մասնագետներ վերապատրաստող կամ պատրաստող մի շարք այլ կառույցներ իրականացնում են համապատասխան վերապատրաստումներ կամ որակավորման բարձրացման դասընթացներ: Ըստ հարցազրույցների մասնակիցների, երեխայի իրավունքների և պաշտպանության վերաբերյալ դասընթացներ են կազմակերպվում նաև միջազգային կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների կողմից: Օրինակ՝ «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպության կողմից դասընթացներ են իրականացվել համայնքային ծառայողների համար, «Արևամանուկ» հիմնադրամը և «Երեխաների պաշտպանության կաթոլիկ գրասենյակը» ՀՀ ոստիկանության հետ համատեղ ոստիկանության անչափահասների գործերով զբաղվող

⁵²Տե՛ս՝ Save the Children Child Safeguarding Policy 2014 (https://resourcecentre.savethechildren.net/node/12166/pdf/sci_cs_pol_child_safeguarding_policy_en.pdf):

աշխատակիցների համար կազմակերպել են դասընթացներ երեխայի հետ հարցաքննություն վարելու վերաբերյալ, «Ապահով համացանց Հայաստան» ծրագրի կողմից իրականացվել են դասընթացներ դպրոցներում համացանցի և թվային տեխնոլոգիաների ապահով և արդյունավետ օգտագործման վերաբերյալ⁵³, Արդարադատության ա-կադեմիայի հեռուստուցման և տեղեկատվական տեխնոլոգիաների դեպարտամենտը ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ ստեղծել է «Անչափահասի պաշտպանությունը քրեական գործերով վարույթի ընթացքում» հեռուստուցման դասընթաց⁵⁴, «Փրոջեքթ հարմոնի ինթերնեյշնլ» կազմակերպությունը ՀՀ քննչական կոմիտեի հետ համատեղ պատրաստել է մասնագիտացված քննիչներ: Ըստ հարցազրույցների մասնակիցների, փաստաբանների համար նման դասընթացներ չեն կազմակերպվել:

Այնուամենայնիվ, ըստ հարցազրույցների մասնակիցների, թեև ՀԿ-ների կողմից իրականացվել են առանձին ծրագրեր⁵⁵, սակայն երեխայի իրավունքների պաշտպանության վերաբերյալ իրազեկվածության մակարդակն ընդհանուր առմամբ ցածր է: Հատկապես ցածր է իրազեկվածության մակարդակը երեխաների սեռական շահագործման և սեռական չարաշահման խնդիրների, դրանց հետևանքների, երեխաների կողմից տրվող հնարավոր ազդանշանների, նման դեպքե-

⁵³ Տե՛ս՝ <http://safe.am> (վերջին անգամ դիտվել է 28.04.18թ.):

⁵⁴ Տե՛ս՝ <http://legalinfo.am/2017/09/28/ի՞նչ-գործունեություն-է-ծավալել-հհ-արդ/> (վերջին անգամ դիտվել է 28.04.18թ.):

⁵⁵ Տե՛ս՝ օրինակ, «Աշխատենք միասին վերջ տալ երեխայի բռնությանը. Հարավկովկասյան համագործակցություն», «Արևամանուկ» բարեգործական հիմնադրամ և «OAK Foundation» 2010–2013թթ., «Համագործակցություն ընդդեմ երեխայի բռնության. Հարավկովկասյան գործընկերություն», «Արևամանուկ» բարեգործական հիմնադրամ և «OAK Foundation» 2014–2017թթ., «Սեռական բռնություն երեխայի հանդեպ», «Արևամանուկ» բարեգործական հիմնադրամ և BICE գործակալություն, 2014–2017թթ., որոնց շրջանակներում տպագրվել են մի շարք ուղեցույցներ՝ «Պաշտպանենք երեխաներին սեռական չարաշահումից. Ուղեցույց ծնողների և երեխաների խնամքով զբաղված անձանց համար», «Չարաշահում և անտեսում երեխաների նկատմամբ. Ուղեցույց ծնողների և երեխաների խնամքով զբաղված անձանց համար» և այլն:

րում երեխայի լավագույն շահերի որոշման և գնահատման, երեխայի մասնակցության և երեխայի լավելու իրավունքի իրացման, անչափահասների արդարադատության, ուղղորդման մեխանիզմների վերաբերյալ: Ինդիորը նաև այն է, որ գրեթե չկան մեթոդական ուղեցույցներ, նյութեր և ձեռնարկներ երեխաների սեռական շահագործման և սեռական չարաշահման դեպքում երեխայի լավագույն շահի գնահատման և որոշման, երեխայի լավելու իրավունքի ապահովման, նման դեպքերի բացահայտման և՛ տուժող, և՛ վկա երեխաների, ինչպես նաև անչափահաս հանցագործների հետ տարվող աշխատանքների վերաբերյալ⁵⁶:

Հետևաբար անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել որպեսզի կրթության, առողջապահության, սոցիալական պաշտպանության, դատական, իրավապահ, ինչպես նաև սպորտի, մշակույթի և ազատ ժամանակի կազմակերպման ոլորտներում երեխաների հետ աշխատող անձինք բավարար գիտելիքներ ունենան երեխաների նկատմամբ սեռական շահագործման և սեռական չարաշահման դրսևորման վերաբերյալ, որպեսզի կարողանան բացահայտել նման դեպքերը և աշխատել և՛ տուժող, և՛ վկա, ինչպես նաև հանցագործություն կատարած անչափահասների հետ:

Երեխաների ուսուցումը⁵⁷

Որպես կանխարգելիչ միջոց Կոնվենցիան կարևորում է տարրական և միջնակարգ կրթություն ստանալու ընթացքում սեռական շահագործման և սեռական չարաշահման հետ կապված վտանգների մասին

⁵⁶Մասնակի այս հարցերը կարգավորված են քննիչների համար նախատեսված ձեռնարկում: Տե՛ս՝ Թումայան Դ., Գրավեսոն Բ. «Օրենքի հետ առնչվող երեխաների նկատմամբ վերաբերմունքի ընդհանուր կանոններն ու առանձնահատկությունները», Երևան, 2016, 36 էջ, <http://investigative.am/images/Mijuk.pdf> (վերջին անգամ դիտվել է 05.05.18թ.):

⁵⁷ Տե՛ս՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը:

երեխաներին իրազեկումը, այդ թվում՝ կապված տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների օգտագործման հետ, իրենց պաշտպանելու միջոցների և աջակցություն ստանալու հնարավորությունների մասին: Այս առումով առաջնահերթությունը տրվում է ծնողների կողմից երեխաներին կրթելուն, սակայն դրա անհնարինության դեպքում Կոնվենցիան, հատուկ չվկայակոչելով դպրոցները⁵⁸ կամ ֆորմալ կրթության պարտադիր մաս չդարձնելով, կոչ է անում պետություններին միջոցներ ձեռնարկել երեխաների իրազեկվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ՝ նրանց տարիքին և հասունության մակարդակին համապատասխան⁵⁹: Այս առումով, ՄԻԵԴ-ը նշել է, որ «սեռական կրթության նպատակներից մեկը սեռական բռնության և շահագործման կանխարգելումն է, քանզի այն երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջության համար իրական սպառնալիք է, որից նրանք պետք է պաշտպանված լինեն ցանկացած տարիքում»⁶⁰: Այն նաև ընդգծել է, որ «պետական կրթության նպատակներից մեկն այն է, որ երեխաներին նախապատրաստեն սոցիալական իրողություններին, և այս առումով սեռական կրթությունն արդարացված է մանկապարտեզ կամ տարրական դպրոց հաճախող երեխաների համար»⁶¹:

Կոնվենցիայի բացատրական զեկույցն ընդգծում է, որ լոկ սեռական շահագործման և սեռական չարաշահման հետ կապված վտանգների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը կարող է երեխաների մոտ վախ առաջացնել, այդ իսկ պատճառով այն պետք է ներկայացվի ընդհանուր սեռական կրթության համատեքստում՝ ուշադրություն դարձնելով, որ երեխաները չկորցնեն վստահությունը մեծահասակների հանդեպ⁶²:

⁵⁸Քանզի հնարավոր է նաև տնային պայմաններում ուսուցում կամ այլ տարրերակներ:

⁵⁹Տե՛ս՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը և դրա Բացատրական զեկույցի 58-63 կետերը:

⁶⁰ Տե՛ս՝ A.R. and L.R. v. Switzerland (no. 22338/15), ECtHR, 19 Dec 2017 (decision on the admissibility):

⁶¹ Նույն տեղը:

⁶² Տե՛ս՝ Կոնվենցիայի բացատրական զեկույցի 62-րդ կետը:

Ինչ վերաբերում է ներպետական օրենսդրությանը, ապա այն կարգավորման կարիք ունի՝ հաշվի առնելով ՀՀ Սահմանադրությունը⁶³ և պետության կողմից ստանձնած պարտականությունները, ինչպես նաև այն հանգամանքը, որ վերջին տարիների ընթացքում սեռական բռնության զոհ են դառնում նաև մանկահասակ երեխաները⁶⁴, ընդ որում այսպես կոչված «վստահության շրջանակին պատկանող անձանց» կողմից⁶⁵: «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքն ընդհանրական է այս հարցում և հստակ կարգավորումներ չունի, հետևաբար պետք է վերանայվի՝ գործուն մեխանիզմներ նախատեսելով այս ուղղությամբ: Վերոնշյալ խնդիրը մասնակի կարգավորված է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքով⁶⁶: «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը թեև անդրադառնում է երեխաների սեռական կրթության հարցին⁶⁷, այնուամենայնիվ այստեղ նույնպես լրացման կարիք կա տարիքային

⁶³ Տե՛ս՝ ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի 1-ին մասը և 37-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:

⁶⁴ Համապատասխան վիճակագրությունը ներկայացված է 2-րդ հոդվածի մեկնաբանությունում:

⁶⁵ Երեխայի նկատմամբ սեռական հանցագործության քրեական գործերով որպես կասկածյալ/ մեղադրյալ 2015թ.-ին ներգրավված անձանցից 30-ը տուժողի հետ եղել են փաստացի ամուսիններ, 1-ը՝ հայրը, 4-ը՝ խորթ հայրը, 1-ը՝ մոր նախկին ամուսինը, 2016թ.-ին՝ 43-ը փաստացի ամուսիններ, 2-ը՝ խորթ հայրը, 1-ը՝ հայրը, իսկ 2017թ.-ին՝ 29-ը փաստացի ամուսիններ, 1-ը՝ համադասարանցին, 1-ը՝ քրոջ ամուսինը, 1-ը՝ խորթ հայրը: Մանրամասն տե՛ս՝ 2015-2016 թվականների սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն ու դրանց վարույթի առանձնահատկությունները, Երևան, 2017, իսկ 2017թ.-ի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է առձեռն՝ հարցազրույցի ժամանակ:

⁶⁶ Ընդունվել է 2017 թվականի դեկտեմբերի 13-ին:

⁶⁷ Տե՛ս՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, “գ” կետը՝ «Յուրաքանչյուր ոք, ներառյալ դեռահասը, իրավունք ունի տեղեկություններ ստանալու իր սեռական առողջության պահպանման հարցերի, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, դրանց բարդությունների և հետևանքների մասին»:»:

սահմանափակման, ընդհանուր սեռական կրթության, այն իրականացնող մասնագետների և մոտեցումների առումով: Լրացման կարիք ունեն նաև «Կրթության մասին» ՀՀ օրենքը⁶⁸ և «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքը⁶⁹, ինչպես նաև այլ իրավական ակտեր, որոնց համակցությամբ կապահովվի նշված ծրագրերի իրականացումը:

Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներից երեխաների օգտվելու և դրանց անվտանգությանն առնչվող օրենսդրական կարգավորումներ չկան՝ չնայած որ Հայաստանը 2017թ.-ին վավերացրել է Եվրոպայի խորհրդի «Կիբերհանցագործությունների մասին» կոնվենցիան:

Հարցազրույցների մասնակիցները նշել են, որ Հայաստանում ծնողները հակված չեն նման թեմաների շուրջ խոսելու երեխաների հետ՝ պայմանավորված ոչ բավարար իրազեկվածությամբ, մշակութային առանձնահատկություններով կամ ծնողավարման հմտությունների բացակայությամբ: Ըստ հարցազրույցների մասնակիցների մարդկանց թրաֆիքինգի, գեղեցիկ խտրականության, ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի, սեռական ոտնձգությունների, վերարտադրողական առողջության և այլ թեմաներ ներառված են 8-ից 11-րդ դասարանի աշակերտներին դասավանդվող «Առողջ ապրելակերպ» դասընթացում: Ինչպես երևում է վերոնշյալից, նման տեղեկատվությունը հասանելի է միայն ավագ դպրոցի աշակերտներին, մինչդեռ Կոնվենցիան նշում է, որ նման կրթություն պետք է ստանան տարրական և միջնակարգ կրթություն ստացող երեխաները⁷⁰: Եվրոպայի խորհրդի

⁶⁸ Տե՛ս՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասը:

⁶⁹Տե՛ս՝ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը:

⁷⁰Օրինակ՝ Ալբանիայի կրթության և սպորտի նախարարությունը ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ համատեղ մշակել են «Կյանքի հմտություններ և սեռական կրթություն» ուսումնական փաթեթ՝ տարրական և միջնակարգ դպրոցների աշակերտների համար: Տե՛ս՝ <https://rm.coe.int/t-es-2017-12-en-final-report-cot-strategies-with-executive-summary/1680788770>, page 29, Second Implementation

«Հինգից մեկը» քարոզարշավի շրջանակներում և National Society for the Prevention of Cruelty to Children (NSPCC) կազմակերպության կողմից իրազեկման բազմաթիվ տպագիր նյութեր և տեսանյութեր են պատրաստվել, այդ թվում նաև մանկահասակ երեխաների համար⁷¹:

Երեխաների իրավունքների, օրինակ՝ երեխայի կրթության կամ առողջության պահպանման իրավունքների վերաբերյալ, իրազեկման աշխատանքներ են տարվում նաև տարբեր կառույցների, այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի (այսուհետ՝ ՄԻՊ) աշխատակազմի կողմից: Սակայն, հարցազրույցների մասնակիցները նշել են, որ երեխաների սեռական շահագործման և սեռական բռնության վտանգների, սեռական դաստիարակության, հնարավոր ռիսկերի և ինքնապաշտպանության ու աջակցության եղանակների վերաբերյալ միջոցառումներ քիչ են իրականացվում և այս ոլորտում իրազեկվածության մակարդակը ցածր է: Ինչ վերաբերում է տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների անվտանգ օգտագործմանը, ապա «Ապահով համացանց Հայաստան» ծրագիրն⁷² իրականացրել և իրականացնում է մի շարք միջոցառումներ, այդ

Report: Protection of Children against Sexual Abuse in the Circle of Trust. The Strategies, Council of Europe, Lanzarote Committee, 2018.

⁷¹Տե՛ս՝ http://www.underwearrule.org/Default_en.asp, <https://www.youtube.com/channel/UCzszRala7VomcD3yzd9IeDw> (վերջին անգամ դիտվել է 28.04.18թ.):

⁷²«Ապահով համացանց Հայաստան» ծրագիրը 2007թ.-ից նախաձեռնել և համակարգում են «Մեդիակրթության կենտրոնը» և «Ինտերնետ հանրություն» կազմակերպությունները: Ծրագրի նպատակն է երեխաներին, ծնողներին և դասավանդողներին տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ և ուսումնական նյութեր՝ նոր տեխնոլոգիաները ապահով և արդյունավետ օգտագործելու նպատակով: Ծրագրի կայացման գործում մեծ դեր է խաղացել Եվրոպայի Խորհրդի, ՀՀ կրթության և գիտության նախարարության, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի, Երևանի քաղաքապետարանի, «Վորլդ Վիժն» միջազգային կազմակերպության և «Մայքրոսոֆթ Հայաստան» ընկերության աջակցությունը: 2011թ.-ին ծրագրի հիմնական գործընկերը եղել է «Օրանժ Արմենիա» ընկերությունը, իսկ 2016թ.-ից՝ UCOM ընկերությունը: Ավելի մանրամասն տե՛ս՝ <http://safe.am/ar/about.html> (վերջին անգամ դիտվել է 30.04.18թ.):

թվում, մայրաքաղաքի և մարզերի դպրոցներում բաց դասեր համացանցի և թվային տեխնոլոգիաների ապահով և արդյունավետ օգտագործման վերաբերյալ, կիրճանվտանգության իրազեկման քարոզարշավներ, ինչպես նաև պատրաստել, թարգմանել, տպագրել և տարածել է ոլորտին առնչվող բազմաթիվ գրքեր, օժանդակ ձեռնարկներ և տեսանյութեր, այդ թվում՝ հարմարեցված երեխաների համար: Ստեղծել է կրթական հղում պարունակող շտեմարաններ, որտեղ չկա վնասակար բովանդակություն, հիմնել և ապահովում է թեժ գիծ, ինչպես նաև ծրագրի շնորհիվ ավելի քան 150 դպրոց միացել է համանվրոպական eSafety Label դպրոցական համացանցային ապահով միջավայրի ստեղծման նախաձեռնությանը⁷³: Նշված դպրոցներից 18-ը ստացել է աստիճանակարգ: 2017-2018թթ.-ին ավելի քան 50 ինֆորմատիկայի դասավանդողներ մասնակցել են համանվրոպական դպրոցական ցանցի ապահով համացանցի 6-շաբաթյա վերապատրաստման դասընթացներին, նրանցից 36-ը ստացել է միջազգային հավաստագիր:

Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների անվտանգ օգտագործման վերաբերյալ հայերեն թարգմանությամբ նյութեր առկա են նաև ՄԻՊ-ի երեխայի իրավունքների կայքում⁷⁴:

⁷³Նույն տեղը՝ <http://safe.am/ar/about.html> և <http://safe.am/index.html> (վերջին անգամ դիտվել է 30.04.18թ.):

⁷⁴Տե՛ս՝ Ընթերցանության նյութեր՝ «SS անվտանգությունը “թեյնիկների” համար»՝ <http://children.ombuds.am/wp-content/uploads/2017/10/IT-for-Dummies-ARM.pdf>, «Գոյատևել թվային աշխարհում»՝ <http://children.ombuds.am/wp-content/uploads/2017/10/Survive-in-the-digital-world-ARM.pdf> (վերջին անգամ դիտվել է 30.04.18թ.):

Կանխարգելիչ միջամտության ծրագրերը կամ միջոցառումները ⁷⁵

Այն անձինք, ովքեր մտավախություն ունեն, որ կարող են կատարել Կոնվենցիայով սահմանված հանցագործությունները, պետք է հնարավորություն ունենան օգտվելու, համապատասխան դեպքում, արդյունավետ կանխարգելիչ միջամտության ծրագրերից կամ միջոցառումներից, որոնք նախատեսված են գնահատելու և կանխարգելելու հանցագործության կատարման վտանգը/ոչսկզբ⁷⁶: Նմանատիպ կանխարգելիչ ծրագրեր, ինչպես նաև գնահատման և կանխարգելիչ միջոցառումներ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն, ինչի մասին նշել են նաև հարցազրույցների մասնակիցները, սակայն որոշ կանխարգելիչ հարցեր մասնակի նախատեսված են «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքում⁷⁷:

Կոնվենցիան վավերացրած մի շարք երկրներ նշել են, որ վերոնշյալ անձինք նման մտավախություն ունենալու դեպքում կարող են դիմել հոգեկան առողջության ծառայություններին, օրինակ՝ Ավստրիայի տնտեսական, ընտանիքի և երիտասարդության հարցերի նախարարությունը ֆինանսավորում է «Տղամարդկանց խորհրդատվության կենտրոնները», որոնք առաջարկում են խորհրդատվություն և թերապիա այն անձանց, ովքեր ունեն նման մտավախություններ: Բելգիայում և Նիդեռլանդներում նման դեպքերի համար գործում է թեժ գիծ՝

⁷⁵ Տե՛ս՝ Կոնվենցիայի 7-րդ հոդվածը:

⁷⁶ Ի տարբերություն այլ միջամտության ծրագրերի կամ միջոցառումների, որոնք միտված են հանցագործություն կատարած, քրեական վարույթում մասնակցող կամ դատապարտված անձանց, այս դեպքում Կոնվենցիան որևէ պարտադրող մոդել չի առաջարկում կողմերին: Տե՛ս՝ Կոնվենցիայի բացատրական զեկույցի 64-րդ կետը:

⁷⁷ Տե՛ս՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» մասին օրենքի 11-րդ հոդվածը:

“Stop it Now!”: Խորվաթիայի առողջապահության նախարարությունը բժիշկների և հոգեբանների մի շարք ասոցիացիաների հետ միասին մշակել է փորձագիտական նախագիծ միջամտության ծրագրերի համար երեխայի հանդեպ սեռական բռնությունը կանխարգելելու նպատակով: Դանիայում սեքսուոլոգիայի կլինիկան նման դեպքերի համար առաջարկում է բուժում և խորհրդատվություն, իսկ այլ հոգեկան առողջության կենտրոններ խրախուսում են երեխաներին և երիտասարդներին նման դեպքերում դիմել մասնագետների օգնությանը: Դանիայում «Սեյվ դը Չիլդրեն» կազմակերպությունն այդ նպատակով գործարկել է հատուկ կայք www.byrdcirklken.dk⁷⁹:

Հեղևաբար Կոնվենցիայի վավերացման դեպքում, պետք է ձեռնարկվեն արդյունավետ կանխարգելիչ միջամտության ծրագրեր, որոնք նախատեսված են գնահատելու և կանխարգելելու հանցագործության կատարման վրանգը:

Միջոցառումներ նախատեսված լայն հասարակության համար ⁸⁰

2017թ.-ից սկսած «Վորլդ Վիժն Հայաստան» և մի շարք այլ միջազգային ու տեղական կազմակերպությունների կողմից իրականացվում է «Բռնությունը փոխարինենք սիրով» երեխաների հանդեպ բռնության դեմ պայքարի հնգամյա հանրային արշավը, որի նպատակն է նպաստել երեխայի հանդեպ (*ֆիզիկական և հոգեբանա-*

⁷⁸See pp. 51-52 (see also Promising Practices), Second Implementation Report, Protection of Children against Sexual Abuse in the Circle of Trust, The Strategies, Lanzarote Committee, Council of Europe, 2018.

⁷⁹See pp. 51-52 (see also Promising Practices), Second Implementation Report, Protection of Children against Sexual Abuse in the Circle of Trust, The Strategies, Lanzarote Committee, Council of Europe, 2018.

⁸⁰Տե՛ս՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածը:

կան⁸¹) բռնության կանխարգելմանը, վերացմանը և բռնության ենթարկված երեխայի համակողմանի վերականգնմանը⁸²: Սակայն այդ արշավի ընթացքում սեռական շահագործման և սեռական բռնության մասին իրազեկում չի իրականացվել:

Հարցազրույցների մասնակիցները նշել են, որ հասարակության լայն շրջանում երեխայի նկատմամբ սեռական շահագործման և սեռական բռնության վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված քարոզարշավների՝ ու կիրառելի կանխարգելիչ միջոցառումների մասին տեղեկատվության տարածում գրեթե չի իրականացվում: Մասնակիցները նշել են, որ հասարակությունը դեռևս պատրաստ չէ բարձրաձայնելու այդ խնդիրը, ինչը պայմանավորված է այնպիսի հանգամանքներով, ինչպիսիք են՝ ավանդույթները, ամոթի զգացումը, հասարակության կողմից քննադատությունը և անհանդուրժողականությունը, անվստահությունը, հետագայում սոցիումում լիարժեք ընդգրկվելու վախը, իրենց իրավունքների և դրանց պաշտպանության մեխանիզմների մասին իրազեկվածության պակասը և այլն:

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի ընդունմամբ պայմանավորված⁸³, վերջերս պետության և ՀԿ-ների կողմից իրա-

⁸¹Տե՛ս՝ <http://mankutyun.am/about.php>, «Հանրային արշավի նպատակը, խնդիրները, հիմնական ռազմավարությունները, ժամկետը և աշխարհագրական ընդգրկումը» (վերջին անգամ դիտվել է 30.04.18թ.):

⁸² Տե՛ս՝ <http://mankutyun.am/about.php>, «Արշավի մասին» (վերջին անգամ դիտվել է 30.04.18թ.):

⁸³Տե՛ս՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորությունների շրջանակներում աջակցում են ընտանիքում բռնության դեմ պայքարին և այդ բնագավառում համագործակցում են լիազոր մարմնի հետ: Նշված մարմինները նաև մասնակցում են նշված բնագավառում հանրության իրազեկմանը, ընտանիքում բռնության ենթարկվածներին սոցիալական և նյութական

կանացվում են ընտանիքում բռնության կանխարգելման վերաբերյալ քարոզարշավներ, սակայն դրանց թիրախը հիմնականում ֆիզիկական բռնության ենթարկված կանայք են:

Թեպետ «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքն արգելում է երեխայի բռնությունը քարոզող, նրա արժանապատվությունը նսեմացնող և նմանատիպ զանգվածային տեղեկատվության և գրականության տարածումը⁸⁴, այնուամենայնիվ օրենքը չի նախատեսում զանգվածային լրատվամիջոցների միջոցով երեխայի պաշտպանությանն ուղղված, այդ թվում՝ ընտանիքում, համապատասխան տեղեկատվության տարածումը՝ որպես կանխարգելիչ և իրազեկման գործիք: Այսինքն, ցանկացած հանցավորության դեմ պայքարի 4P սկզբունքը՝ պաշտպանել, կանխարգելել, հետապնդել և համագործակցել, այս համատեքստում իրականացվում է մասնակի: Հետևաբար հաշվի առնելով արդեն իսկ ստանձնած պարտավորությունները, առկա է օրենսդրության վերանայման կարիք:

Հարցազրույցների մասնակիցները նշել են, որ ՁԼՄ-ները ոչ միշտ են պատշաճ լուսաբանում երեխայի սեռական բռնության հետ կապված դեպքերը: Նրանք շատ հաճախ հրապարակում են այնպիսի տեղեկություն, որը թույլ է տալիս բացահայտելու երեխայի ինքնությունը, որի արդյունքում երեխաները երկրորդային զոհացման են ենթարկվում: Ըստ էության ՁԼՄ-ները հիմնականում լուսաբանում են երեխայի բռնության առանձին դեպքեր: Չնայած, որ ՀՀ արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը 2016թ.-ին կոնկրետ դեպքի վերաբերյալ ընդունել է Երեխաների անձնական տվյալների հրապարակման վերաբերյալ խորհրդատվական որոշում և 2017թ.-ին հրատարակել է Երեխաների անձնական տվյալների պաշտպանության մասին ուղեցույց, ինչպես նաև Երեխայի պաշտպանության ցանցի կողմից

աջակցություն ցուցաբերելուն ուղղված միջոցառումների իրականացմանը»: Տե՛ս՝ նաև նույն օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը:

⁸⁴ Տե՛ս՝ «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը:

իրականցվել են մի շարք միջոցառումներ խնդրի լուծման ուղղությամբ, այնուամենայնիվ երեխաների անձնական տվյալների պաշտպանության իրավունքը ՁԼՄ-ների կողմից շարունակում է ոտնահարվել⁸⁵: Հարկ է նշել, որ ՄԻՊ-ի անձնակազմի երեխաների իրավունքների բաժինը ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համատեղ իրականացրել են Երեխային վերաբերող հարցերի լուսաբանման էթիկական նորմերի վերաբերյալ դասընթացներ ՁԼՄ-ների ներկայացուցիչների համար: *Հեղուաբար երեխայի լավագույն շահերով առաջնորդվելու և երեխայի իրավունքների պաշտպանության օրենսդրական երաշխիքները պեպք է սահմանվեն նաև «Անձնական տվյալների պաշտպանության մասին» և «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքներում: «Ընդհանրում բռնության կանխարգելման, ընդհանրում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընդհանրում համերաշխության վերականգնման մասին» օրենքն այս հարցին անդրադառնում է 14-րդ հոդվածում, բայց երեխաների հետ կապված առանձնահատկությունները չեն շեշտվում: Բացի այդ, փոփոխություններ պեպք է իրականացնել ոչ միայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» և «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքներում, այլ նաև սրբեղծել գործուն մեխանիզմներ հրապարակումները մոնիթորինգի ենթարկելու և իրազեկվածությունը բարձրացնելու համար:*

⁸⁵Հարկ է նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 189.17-րդ հոդվածով նախատեսված է պատասխանատվություն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը խախտելու համար:

Երեխաների մասնակցությունը⁸⁶

Երեխայի մասնակցության իրավունքն ամրագրված է մի շարք միջազգային և ներպետական իրավական ակտերով⁸⁷: Չնայած իրավական կարգավորումներին, այնուամենայնիվ գործնականում երեխայի մասնակցության իրավունքը լիարժեք չի իրականացվում: Թեև երեխաները պարբերաբար մասնակցության հնարավորություն ունեն տարբեր միջոցառումներին, սակայն, դրանք հաճախ լինում են միանգամյա, չեն կրում շարունակական բնույթ և չկան նախապատրաստական աշխատանքներ: Որպեսզի երեխաների մասնակցությունը լինի արդյունավետ, իմաստալից և կայուն, անհրաժեշտ է, որ երեխաներն ունենան իրավունք, միջոցներ, հնարավորություն, տարածություն և աջակցություն⁸⁸: Արդյունավետ մասնակցությունը պահանջում է երեխաների մասնակցության ունակությունների զարգացում, ժամանակ, ռեսուրսներ, տեղեկատվության տրամադրում, առանց խտրականության վերաբերմունք և հատուկ ուշադրություն առավել խոցելի խմբերի երեխաներին, պաշտպանության միջոցների ձեռնարկում, իրազեկվածություն երեխաների մասնակցության ծավալի,

⁸⁶ Տե՛ս՝ Կոնվենցիայի 9-րդ հոդվածը:

⁸⁷ Տե՛ս՝ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի (վավերացվել է 1993թ.-ին) 4-րդ և 12-17-րդ հոդվածները, ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին մասը, 41-րդ, 42-րդ, 44-րդ, 45-րդ, 46-րդ և 51-րդ հոդվածները (ընդունվել է 1995թ.-ի հուլիսի 5-ի ՀՀ հանրաքվեով, վերջին անգամ փոփոխվել է 2015թ.-ի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով), «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 21-րդ հոդվածները (ընդունվել է 1996թ.-ի մայիսի 29-ին, վերջին անգամ փոփոխվել է 2018թ.-ի մարտի 23-ին), «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը, 12-րդ հոդվածի 1-ին մասը, 46-րդ հոդվածը (ընդունվել է 2002թ.-ի մայիսի 7-ին, վերջին անգամ փոփոխվել է 2018թ.-ի հունվարի 16-ին): Սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը վերանայման և ՀՀ Սահմանադրությանը համապատասխանեցնելու կարիք ունի, որտեղից անհրաժեշտ է հանել տարիքային սահմանափակումը: ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի նիստի N 30 արձանագրային որոշման Հավելված N 1-ի 3-րդ կետը:

⁸⁸Տե՛ս՝ Տեղական և տարածքային հասարակական կյանքին երիտասարդների մասնակցության վերաբերյալ վերանայված Եվրոպական Խարտիան, RMSOS մոդելը:

ներառյալ սահմանափակումների, սպասվող և առկա արդյունքների և նրանց կարծիքները հաշվի առնվելու ձևերի մասին⁸⁹:

Հարցազրույցների մասնակիցները նշել են, որ երեխաների մասնակցությունը պետական քաղաքականության, ծրագրերի⁹⁰ կամ այլ նախաձեռնությունների մշակման, ընդունման, իրականացման, մոնիթորինգի և գնահատման գործընթացներում ապահովված չէ: Հարցազրույցների մասնակիցները նշել են նաև, որ երեխաներն ընդգրկված չեն այնպիսի կառույցներում, ինչպիսիք են՝ ՀՀ-ում գործող երեխայի իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգը, Անչափահասների արդարադատության խորհուրդը, Երեխաների պաշտպանության ցանցը և ՄԻՊ-ի անձնակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը: Որպես լավագույն փորձ կարելի է նշել Երեխաների խորհուրդների, Երեխայի իրավունքի կոմիտեների, երեխաների խմբերի, երեխաների խորհրդարանների, խորհրդատվական մարմինների ստեղծումը, որոնց հետ պարբերաբար խորհրդատվություններ են անցկացնում համապատասխան պետական և տեղական մարմինները, հանձնաժողովները, ազգային խորհրդարանները և հասարակական կազմակերպությունները⁹¹ կամ տեղեկատվական առցանց հարթակները, որտեղ երեխաները նույն-

⁸⁹Տե՛ս՝ Հանձնարարական CM/Rec(2012)2 անդամ երկրներին Նախարարների կոմիտեից երեխաների և մինչև 18 տարեկան երիտասարդների մասնակցության վերաբերյալ (<https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806a44f3>):

⁹⁰Տե՛ս՝ «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, Երեխայի իրավունքների պաշտպանության տարեկան ծրագրերը, Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգը, «ՀՀ երեխայի իրավունքների պաշտպանության» 2017-2021 թվականների ռազմավարական ծրագիրը:

⁹¹ Տե՛ս՝ էջ 10, Lanzarote Committee, 2nd Implementation Report “Protection of Children against Sexual Abuse in the Circle of Trust: The Strategies” (<https://rm.coe.int/t-es-2017-12-en-final-report-cot-strategies-with-executive-summary/1680788770>, վերջին անգամ դիտվել է 28.04.2018թ.):

պես մասնակցության հնարավորություն ունեն⁹²:

Ինչ վերաբերում է մասնավոր հատվածի և ՋԼՄ-ների մասնակցությանը քննարկվող երևույթների դեմ ուղղված պայքարին առնչվող պետական քաղաքականության գործընթացներին, ապա այն նույնպես բացակայում է: Բացի այդ, ըստ հարցազրույցների մասնակիցների, Երևանում գործող հասարակական կազմակերպություններն ավելի մեծ հնարավորություններ ունեն ներգրավված լինելու երեխայի իրավունքների պաշտպանության պետական քաղաքականության գործընթացներին, քան մարզային ՀԿ-ները: Նշվեց նաև, որ իրավական ոլորտում առկա է ՀԿ-ների կարողությունների զարգացման կարիք:

Հեղևաբար երեխաների մասնակցությունն արդյունավետ ապահովելու համար անհրաժեշտ է և՛ ամրագրել այդ իրավունքը, և՛ համապատասխան միջոցներ ու հնարավորություններ տրամադրել՝ աջակցելով տարբեր ոլորտներում և մակարդակներում դրա կազմակերպմանը:

Մասնագիտացված և համակարգող մարմինները

Համակարգման և համագործակցության ազգային միջոցառումները⁹³

Երեխայի պաշտպանության համակարգի բացերից խոսվել է ազգային և միջազգային մակարդակում: Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի կարգավիճակը պետք է վերանայվի երեխայի պաշտպանության համապարփակ քաղաքականության շրջանակներում, իսկ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներում պետք է ներգրավվեն վերապատրաստված հաշվետու մասնագետներ: Անհրաժեշտ է նաև նախատե-

⁹²See <http://www.childpresscentre.org/our-work/> (վերջին անգամ դիտվել է 28.04.2018թ.):

⁹³ Տե՛ս՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածը:

սել երեխաների ներգրավման մեխանիզմներ⁹⁴:

Ինչ վերաբերում է համագործակցությանը, ապա հարցազրույցների մասնակիցները նշել են, որ համագործակցությունը պետական և համայնքային մարմինների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների միջև ընդհանուր առմամբ լավ է ընթանում, չնայած այն հիմնականում մեծամասամբ պայմանավորված է կոնկրետ մասնագետի պատրաստվածությունից:

Երեխայի նկատմամբ սեռական շահագործման և սեռական չարաշահման դեմ ուղղված պայքարի հարցում երեխայի իրավունքներով զբաղվող կազմակերպությունների և պետական կառույցների համագործակցությունը մասնավոր հատվածի, մասնավորապես տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների, տուրիզմի, բանկային և ֆինանսական ոլորտների հետ, բավականին թույլ է և հիմնականում սահմանափակվում է բարեգործական և կարճաժամկետ ծրագրերի ֆինանսավորմամբ: Վերջիններս ընդգրկված չեն որևէ խորհրդատվական մարմիններում կամ ցանցերում, ինչպես օրինակ՝ Անչափահասների արդարադատության խորհրդում, Երեխայի իրավունքների պաշտպանության ցանցում կամ Երեխայի իրավունքների պաշտպանության հանձնաժողովում, ինչպես նաև ներգրավված չեն ոլորտի քաղաքականության մշակման գործընթացներում, չնայած որ ժամանակի հետ նրանց դերը դառնում է ավելի արդիական: Սակայն, խոսելով տուրիզմի բնագավառից, հարկ է նշել նաև, որ «Հույս և օգնություն» կազմակերպությունը, որը ներկայացված է վերոնշյալ մարմիններում, անդամակցում է The Code⁹⁵ միջազգային կազմակերպության ցանցին, որի նպատակն է պաշտպանել երեխաներին «սեքս տուրիզմից»:

Թույլ է նաև համագործակցությունը երեխայի պաշտպանութ-

⁹⁴ Տե՛ս՝ Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և երեխաների պոռնոգրաֆիայի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցող տիկին Մոդ դե Բյոր-Բուքիքիոյի այցը Հայաստան, 2015թ.-ի մայիսի 12-18:

⁹⁵Short for “The Code of Conduct for the Protection of Children from Sexual Exploitation in Travel and Tourism”.

յամբ զբաղվող կառույցների ու փաստաբանների, դատախազության և դատարանների միջև: Այս կառույցի ներկայացուցիչները նույնպես ընդգրկված չեն երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովում⁹⁶: Թեև դատական դեպարտամենտը և դատախազությունը ներգրավված են Անչափահասների արդարադատության խորհրդում, այնուամենայնիվ, վերոնշյալ խորհրդի կազմում ընդգրկված չեն փաստաբանները/հանրային պաշտպանի գրասենյակները: Որպես լավագույն փորձ, կարելի է ընդգծել երեխայակենտրոն, բազմամասնագիտական և միջգերատեսչական կենտրոնները, օրինակ՝ տուժող և վկա երեխաների համար նախատեսված երեխաների տունը (Børnehuse)⁹⁷, որտեղ երեխաները կարող են հարցաքննվել և դատաբժշկական փորձաքննության նպատակներով անցնել բուժզննում, բազմակողմանիորեն գնահատվել և ստանալ բոլոր համապատասխան թերապևտիկ ծառայությունները համապատասխան մասնագետների կողմից: Սակայն, նման կենտրոններ կամ ծառայություններ և համագործակցության հարթակ Հայաստանում դեռևս չկան:

Ինչ վերաբերում է միջազգային համագործակցությանը, ապա հարցազրույցների մասնակիցները նշել են, որ 2017թ.-ին Հայաստանը միացել է We Protect Global Alliance միջազգային շարժմանը, որի նպատակն է պաշտպանել երեխաներին առցանց սեռական շահագործումից: Հայաստանը միացել է նաև End Violence Against Children գլոբալ գործընկերությանը (EVAC GP)՝ որպես ուղենշող երկիր: Բացի այդ, երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում գործող ա-

⁹⁶Տե՛ս՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=80400> (վերջին անգամ դիտվել է 30.05.2018թ.):

⁹⁷Կենտրոն, որտեղ երեխաների նկատմամբ սեռական բռնության հնարավոր դեպքերը քննելու և սեռական բռնությունից տուժած երեխաներին համապատասխան աջակցություն տրամադրելու նպատակով իրավասու տարբեր մասնագետներն աշխատում են մեկ տանիքի տակ: Տե՛ս ավելի մանրամասն՝ <https://rm.coe.int/lanzarote-1st-implementation-report-en/168072b952>, “1st Implementation Report, Lanzarote Commteet, 2015”, էջ 25 (վերջին անգամ դիտվել է 28.04.18թ.):

մենախոշոր և ազդեցիկ միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունները, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը և ՄԻՊ-ը միավորվել են «Բռնությունը փոխարինենք սիրով» տեղական արշավի շրջանակներում, որը համահունչ է EVAC GP-ի նպատակներին:

Ինչ վերաբերում է վիճակագրությանը, ապա ՀՀ քննչական կոմիտեում քրեական գործերի վերաբերյալ վարվում է կիսամյակային և տարեկան վիճակագրություն, որը հրապարակվում է նաև պաշտոնական կայքէջում⁹⁸: 2017թ.-ին «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ-ն և ՀՀ քննչական կոմիտեն համատեղ կատարել են «2015-2016 թվականների սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն ու դրանց վարույթի առանձնահատկությունները» վերտառությամբ հետազոտություն, որը նաև երեխաներին վերաբերող մանրամասն վիճակագրություն է ներկայացնում⁹⁹: Վիճակագրություն վարում է նաև ՀՀ ոստիկանության տեղեկատվական կենտրոնը: ՀՀ դատական դեպարտամենտը հավաքում և վարում է դատական վիճակագրությունը: Դատական դեպարտամենտն ապահովում է դատական գործի վիճակագրական քարտի հիման վրա հավաքված վիճակագրական տվյալների մատչելիությունը հանրության համար՝ բացառությամբ օրենքով նախատեսված հրապարակման ոչ ենթակա տեղեկատվության: Վիճակագրական տվյալները հրապարակվում են դատական իշխանության պաշտոնական կայքում¹⁰⁰:

Հեղևաբար երեխաների սեռական շահագործման և սեռական չարաշահման դեմ պայքարում խիստ կարևորվում է ազգային մակարդակով համագործակցությունը:

⁹⁸Տե՛ս օրինակ այստեղ՝ <http://investigative.am/news/view/erexaneri-nkatmamb-katarvac-hancagorcutyunner.html> (վերջին անգամ դիտվել 01.05.18թ.):

⁹⁹Տես այստեղ՝ <http://saccarmenia.org/hy/news/news/research/12/> (վերջին անգամ դիտվել 01.05.18թ.):

¹⁰⁰ Տե՛ս՝ Դատական օրենսգրքի 19-րդ հոդվածը:

Պաշտպանական միջոցառումներ և օգնություն տուժածներին

Ի հավելումն վերոնշյալի՝ Կոնվենցիան վավերացնող կողմերին խրախուսում է զոհերին պաշտպանելու և հանցագործներին պատասխանատվության ենթարկելու հարցում լրացուցիչ միջոցներ ձեռնարկելու համար, մասնավորապես՝ զոհերի աջակցությանն ուղղված ծրագրեր իրականացնելու, թեժ գծեր ստեղծելու, սեռական շահագործման և սեռական չարաշահման վերաբերյալ կասկածների մասին հաղորդելու և այլնի համար:

Սեռական շահագործման կամ սեռական չարաշահման վերաբերյալ կասկածների մասին տեղեկացնելը¹⁰¹

Մտահոգիչ է այն, որ ներպետական օրենսդրությունը երաշխիքներ չի սահմանում, որպեսզի խնամակալության և հոգաբարձության մարմինները և հանձնաժողովի անդամները, ովքեր մշտապես շփվում են երեխաների հետ, ունենան բավարար գիտելիքներ երեխայի իրավունքների վերաբերյալ և երեխայի հետ աշխատելու համապատասխան փորձ՝ մասնավորապես երեխաների սեռական շահագործման և սեռական չարաշահման խնդիրների, դրանց հետևանքների, երեխաների կողմից տրվող հնարավոր ազդանշանների, նման դեպքերում երեխայի լավագույն շահերի որոշման և գնահատման, երեխայի մասնակցության և երեխայի լսվելու իրավունքի իրացման և ուղղորդման մեխանիզմների վերաբերյալ: Հարցազրույցների մասնակիցները նշել են, որ այս մարմինների գործունեությունը շատ հեռու է իդեալական լինելուց և առկա խնդիրների վերացումը հույժ հրատապ է (ինչը

¹⁰¹Տե՛ս՝ Կոնվենցիայի 12-րդ հոդվածը:

երևում է նաև ՄԻՊ-ի արտահերթ զեկույցից¹⁰²):

Սեռական շահագործման և սեռական բռնության ենթարկված երեխաների ուղղորդման ընթացակարգերը նույնպես խնդրահարույց են, քանզի կարգավորումները նախատեսված են միայն «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքով, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2016 թվականի 26 մայիսի N 551-Ն որոշմամբ¹⁰³: Եթե սեռական բռնությունն ընտանիքում է կատարվել, ապա կիրառելի են նաև «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի դրույթները:

Թեև երեխայի հանդեպ բռնության դեպքերում ուղղորդման ընթացակարգերի մշակումը նախատեսված է եղել 2016թ.-ի երկրորդ եռամսյակին՝ ի լրումն երեխայի հանդեպ բռնության դեմ պայքարի հայեցակարգից բխող մի շարք միջոցառումների, մասնավորապես՝ բռնության ենթարկված երեխաների իրավական, կրթական, առողջապահական և սոցիալական պաշտպանության բնագավառում պետական գործունեության հիմնական ուղղությունների, երեխայի հանդեպ բռնության երևույթի վերացմանն ուղղված շահագրգիռ մարմինների համաձայնեցված գործունեության կառուցակարգերի (մեխանիզմների), երեխայի հանդեպ բռնության երևույթի մասին տեղեկատվության հավաքագրման կառուցակարգերի և երեխայի հանդեպ բռնության երևույթի մասին հասարակության տեղեկացվածությունն ապահովող կառուցակարգերի (մեխանիզմների) մշակման¹⁰⁴, այնու-

¹⁰²Տե՛ս՝ <http://www.ombuds.am/images/Final.pdf> (վերջին անգամ դիտվել է 05.05.18թ.):

¹⁰³Որոշումը վերաբերում է Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների՝ այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման կարգին և չափորոշիչներին:

¹⁰⁴ Տե՛ս՝ «Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգին և դրանից բխող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ

ամենայնիվ այդ միջոցառումները չեն կատարվել: Այս գործընթացում անդամ երկրներին աջակցելու նպատակով Եվրոպայի խորհուրդը մշակել է Երեխաներին բռնությունից պաշտպանելու միասնական ազգային ռազմավարությունների քաղաքականության ուղենիշներ, որոնք առաջարկում են բազմաճյուղ և համակարգված ազգային կառուցվածք՝ կանխելու և արձագանքելու երեխաների դեմ ուղղված բռնության բոլոր գործողություններին¹⁰⁵:

Շեքլաբար կարելի է նշել, որ երեխաների հանդեպ տարբեր հանցավոր դրսևորումների դեպքում առանձին ուղղորդման մեխանիզմներ գոյություն ունեն, սակայն դրանք չեն ներառում բոլոր հանցավոր դրսևորումները և միասնականացման կարիք ունեն:

Օգնության տեղեկատվական ծառայությունները¹⁰⁶

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի համաձայն՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում լիազոր մարմինը հանրության համար հասանելի կերպով պարբերաբար հրապարակում է կապի այն միջոցների ցանկը (ներառյալ՝ անվճար «Թեժ գիծ»), որոնցով ընտանիքում բռնության ենթարկվածները, նրանց ընտանիքի անդամները և այլ անձինք կարող են անհապաղ կապվել աջակցության կենտրոնների աշխատողի կամ կենտրոնի կողմից ներգրավված համապատասխան մասնագետի հետ և ստանալ անհրաժեշտ անհատույց, իսկ հաշմանդամություն ունեցող անձանց

կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի նիստի N 51 արձանագրային որոշման 18-րդ կետը և միջոցառումների ցանկը, N 1 և N 2 հավելվածները:

¹⁰⁵ Տե՛ս՝ <https://rm.coe.int/16806a44f2> (վերջին անգամ դիտվել է 28.04.18թ.):

¹⁰⁶ Տե՛ս՝ Կոնվենցիայի 13-րդ հոդվածը:

դեպքում՝ նաև նրանց համար մատչելի օգնություն»¹⁰⁷:

Հայաստանում պետական մարմինների մեծ մասում գործում են թեժ գծեր (օրինակ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում, Արդարադատության նախարարությունում, Արտակարգ իրավիճակների նախարարությունում, ՀՀ ոստիկանությունում և այլն), սակայն հարցազրույցների մասնակիցները դժվարացան պատասխանել թե որքանով են դրանք արդյունավետ և մատչելի ու հարմարեցված երեխաների կարիքներին, և թե արդյոք թեժ գծերը սպասարկող անձնակազմն անցնում է հատուկ վերապատրաստումներ: Սակայն, պետք է նշել, որ որոշ պետական կառույցներին կից թեժ գծերը, օրինակ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում կամ Երևանի քաղաքապետարանի, գործում են միայն աշխատանքային ժամերին¹⁰⁸, մինչդեռ երեխաների համար նախատեսված թեժ գծերը պետք է գործեն շուրջօրյա:

Բացի այդ, գործող թեժ գծերը հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող երեխաների համար, ուստի անհրաժեշտ է ներդնել երեխայակենտրոն բողոքարկման մեխանիզմներ նաև հաշմանդամություն ունեցող երեխաների համար:

Հարցազրույցների մասնակիցները կարևորել են նաև թեժ գծերից օգտվելու երեխաների իրազեկման խնդիրը: Մի մասը նշել են, որ առանց պատշաճ իրազեկման երեխաները կարող են չարաշահել թեժ գծերը, իսկ մասնակիցների մյուս մասը պնդել է, որ երեխաներն անգամ բավարար չափով իրազեկված չեն իրենց իրավունքներից, որպեսզի չարաշահեն այն:

Երեխաների համար նախատեսված թեժ գծերի ծառայություններ է մատուցում նաև ՄԻՊ անձնակազմի երեխաների պաշտպանության բաժինը՝ ընդ որում անանուն առցանց և հեռախոսային կա-

¹⁰⁷Տե՛ս նույն տեղը, 14-րդ հոդվածի 7-րդ մաս:

¹⁰⁸Տե՛ս՝ Թեժ գիծ ծառայություն՝ <http://www.ssss.am/arm/hot-line-service/> և <https://www.yerevan.am/am/hot-line/> (վերջին անգամ դիտվել է 28.04.18թ.):

պի միջոցով¹⁰⁹ (կայքը նաև բացատրում է թե՛ ինչպես և որ դեպքերում երեխաները կարող են դիմել պաշտպանին¹¹⁰), ինչպես նաև մի շարք հասարակական կազմակերպություններ, օրինակ՝ ՀՕՖ-ի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամը՝ ծնողազուրկ և անապահով ընտանիքների երեխաների պաշտպանության հարցերով¹¹¹, Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնը¹¹², «Ապահով համացանց Հայաստան» ծրագիրը՝ համացանցում ոչ պատշաճ կամ կասկածելի բովանդակության հանդիպելիս¹¹³ և այլն:

Քանի որ երեխաներին հարմարեցված բողոքարկման մեխանիզմները, այդ թվում՝ թե՛ գծերը, հանդիսանում են երեխայի պաշտպանության արդյունավետ համակարգի հիմնական բաղադրիչներից մեկը, հետևաբար անհրաժեշտություն է առաջանում միասնական «Թե՛ գիծ» սպեղծելու գաղափարը՝ գործող «Թե՛ գծերի» գործունեությունն ու դրա արդյունավետությունն ուսումնասիրելուց հետո: Ցանկալի է, որ այդ թե՛ գիծը գործի շուրջօրյա և հագեցված լինի վերապատրաստված մասնագետներով:

Օգնություն տուժածներին¹¹⁴

Տուժող երեխաների ֆիզիկական առողջացման և հոգեբանական-սոցիալական վերականգման գործընթացում կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում աջակցությունը կարգավորվում է մի

¹⁰⁹Տե՛ս՝ Ստանալ խորհրդատվություն՝ <http://children.ombuds.am/%D5%BDստանալ-խորհրդատվություն/> (վերջին անգամ դիտվել է 28.04.18թ.):

¹¹⁰ Տե՛ս՝ Հաճախ տրվող հարցեր՝ <http://children.ombuds.am/հաճախակի-տրվող-հարցեր/> (վերջին անգամ դիտվել է 28.04.18թ.):

¹¹¹Տե՛ս՝ «Ապահով համացանց Հայաստան» ծրագրի թե՛ գիծ ծառայությունը՝ <http://safe.am/ar/tezhgic.html>, վերջին անգամ դիտվել է 28.04.18թ.:

¹¹² Տե՛ս՝ <http://saccarmenia.org/hy/> (վերջին անգամ դիտվել է 28.04.18թ.):

¹¹³Տե՛ս՝ Շուրջօրյա թե՛ գիծ ծառայություն (առցանց և հեռախոսային կապի միջոցով) <http://safe.am/ar/tezhgic.html> (վերջին անգամ դիտվել է 28.04.18թ.):

¹¹⁴ Տե՛ս՝ Կոնվենցիայի 14-րդ հոդվածը:

շարք ներպետական իրավական ակտերով: Սոցիալական ծառայությունները, դրանց դասակարգման հիմքերը և տրամադրող սուբյեկտները, սոցիալական աջակցության կառավարման համակարգը և ֆինանսավորման աղբյուրները սահմանված են «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով:

Ընտանիքում բռնության կանխարգելման բնագավառում առողջապահության ոլորտի լիազոր հանրապետական գործադիր մարմինն ապահովում է ընտանիքում բռնության ենթարկված անձանց համար անհատույց առաջնային բժշկական օգնություն¹¹⁵: Յուրաքանչյուր երեխա առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում իրավունք ունի ստանալու անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում¹¹⁶: Ընդ որում շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությանը տառապող մարդն իրավունք ունի անվճար ստանալու պետության կողմից երաշխավորված կարգով բժշկական օգնություն և սպասարկում և բուժվել այդ նպատակի համար նախատեսված հատուկ մասնագիտացված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում¹¹⁷: *Հարկանշական է, որ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում սեռական բռնության ենթարկված երեխաներն ընդգրկված չեն*¹¹⁸: Սակայն, եթե երեխան ունի այլ հատկանիշ, որի հիման վրա

¹¹⁵Տե՛ս՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասը:

¹¹⁶ Տե՛ս՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը:

¹¹⁷ Տե՛ս՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը:

¹¹⁸ Տե՛ս՝ ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման N 1 Հավելվածը՝ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=88089> (վերջին անգամ դիտվել է 10.05.18թ):

հնարավոր է տրամադրել անվճար բժշկական օգնություն և սպասարկում, ապա այն տրամադրվում է, որպես այդ խմբի ներկայացուցիչ, օրինակ՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխա է:

Ներպետական օրենսդրությամբ նախատեսված են տուժող երեխաների համար ֆիզիկական առողջացման և հոգեբանական-սոցիալական վերականգման ծառայություններ¹¹⁹, սակայն գործնականում դրանց ներդրման հարցում գոյություն ունեն մի շարք խնդիրներ՝ կապված ֆինանսավորման, մասնագետների վերապատրաստման, ենթաօրենսդրական ակտերի ընդունման և այլնի հետ:

2013թ.-ից ի վեր սկսվել են երեխայի այլընտրանքային խնամքի բարեփոխումները, որոնց նպատակն է երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների վերակազմակերպումը, աջակցության բազմաֆունկցիոնալ կենտրոնների ստեղծումը, որոնք տարաբնույթ ծառայություններ կառաջարկեն երեխաներին և ընտանիքներին: Հարցազրույցների մասնակիցները նշել են, որ երեխաներին մատուցվող ներկա ծառայությունները սակավաթիվ են, բազմատեսակ չեն և չեն համապատասխանում երեխաների կարիքներին: Գործող մասնագիտացված կենտրոնները, ինչպիսիք են՝ Երևանի «Ձատիկ» երեխաների աջակցության կենտրոնը և Հայ օգնության ֆոնդի երեխաների աջակցության կենտրոնը, որտեղ ընդունում են երեխաներ տարբեր մարզերից, կարող են միայն կարճաժամկետ աջակցություն տրամադրել սահմանափակ թվով երեխաների: Թեև սեռական բռնության ենթարկված երեխաներին աջակցություն են տրամադրում նաև մի շարք հասարակական կազմակերպություններ, ինչպիսիք են՝ Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնը, «Ամբողջ Հայաստան» բարեգործական հիմնադրամը, Կանանց ռեսուրսների կենտրոնը, «Հույս և հավատի օջախ» ՀԿ-ն և այլն, միևնույնն է

¹¹⁹Տե՛ս՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» մասին ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը, 18-րդ հոդվածի 1-ի մասը, և ՀՀ ԸՕ-ի 137-րդ հոդվածի 1-ին մասը, 139-րդ հոդվածը, 1-ին հոդվածի 7-րդ մասը և 44-րդ հոդվածը:

խնդիրը չի լուծվում: Ավելին, ընդհանրապես գոյություն չունեն երկարաժամկետ աջակցություն տրամադրող կենտրոններ/ծառայություններ, որոնք բռնության ենթարկված երեխաներին աջակցություն կցուցաբերեն ընդհուպ մինչև չափահաս դառնալը:

Ինչ վերաբերում է տուժող երեխայի մերձավորներին խիստ անհրաժեշտ դեպքերում թերապևտիկ՝ մասնավորապես առաջնային հոգեբանական օգնություն ցուցաբերելուն, ապա թե՛ Երևանի «Ձատիկ» երեխաների աջակցության կենտրոնը, և թե՛ օրինակ վերջերս վերակազմակերպված «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնը» օրենսդրորեն նախատեսում են սոցիալ-հոգեբանական վերականգնողական աշխատանքներ: Ըստ հարցազրույցի մասնակիցների, թեև «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնում» հոգեբաններ առկա են, սակայն նրանք ունեն ընդհանուր մանկական հոգեբանի հմտություններ, բայց ոչ՝ բռնության ենթարկված երեխայի հետ աշխատելու: Ուստի անհրաժեշտ է մասնագիտական վերապատրաստում, որպեսզի օրենսդրորեն ապահովված այս երաշխիքը գործնականում կիրառվի:

Ըստ հարցազրույցների մասնակիցների, պետական մարմինները համագործակցում են տեղական և միջազգային կազմակերպությունների հետ՝ տուժած երեխաներին աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ: Լիազորած պետական մարմնի, տարածքային կառավարման պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և տարածքային մարմինների համագործակցությունը սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների հետ նախատեսված է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով¹²⁰ և ՀՀ կառավարության որոշմամբ¹²¹:

Ինչպես արդեն նշվել է, երեխայի լավագույն շահերը ապահովելու և կարծիքն արտահայտելու ու լսվելու իրավունքի սկզբունքները,

¹²⁰ Տե՛ս՝ ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածը:

¹²¹ Տե՛ս՝ «Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 10 սեպտեմբերի 2015թ. N 1044-Ն որոշումը:

ինչպես նաև երեխայի և ծնողի փոխհարաբերությունները և դրանց դադարեցման կամ սահմանափակման հիմքերն ամրագրված են ՀՀ Սահմանադրությամբ¹²²: ՀՀ ԸՕ-ում երեխայի այլընտրանքային խնամքի բարեփոխումների շրջանակներում կատարված լրացումները և փոփոխությունները հնարավորություն են ընձեռում սեռական չարաշահման կամ բռնության ենթարկված երեխային մեկուսացնելու իր ընտանեկան միջավայրից՝ հաշվի առնելով երեխայի կարծիքը և նրա լավագույն շահերը¹²³:

Եթե երեխայի ծնողները կամ նրա խնամքն իրականացնող անձինք ներգրավված են նրա նկատմամբ բռնություն կիրառելու հարցում, ապա ընտանիքում բռնություն գործադրած անձն անհապաղ հեռացվում է ընտանիքում բռնության ենթարկվածի բնակության տարածքից և նրան արգելվում է այդտեղ վերադարձը՝ մինչև որոշմամբ սահմանված ժամկետի լրանալը¹²⁴: Իր ընտանեկան միջավայրից տուժածին մեկուսացնելու հնարավորություն է տրվում ապաստարանում¹²⁵, որտեղ նա կարող է համապատասխան ծառայություններ ստանալ: Նման մեկուսացման պայմանները և տևողությունը որոշվում է՝ ելնելով երեխայի շահերից:

Ընտանեկան գործերով վարույթի շրջանակներում երեխայի լավագույն շահերի և կարծիքն արտահայտելու ու լսվելու իրավունքի

¹²² Տե՛ս՝ ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածը:

¹²³ Տե՛ս՝ ՀՀ ԸՕ-ի 1-ին հոդվածի 7-րդ մասը, ինչպես նաև 44-րդ, 58-րդ, 111-րդ, 136-րդ, 137-րդ, 139-րդ հոդվածները: Տե՛ս՝ նաև. «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին խնամատարության հանձնելու ընթացակարգի բարեփոխման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2016թ.-ի մարտի 10-ի արձանագրային որոշումը:

¹²⁴ Տե՛ս՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը և 8-րդ հոդվածի 5-րդ մասը:

¹²⁵ Ապաստարանը պետք է ապահովված լինի ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները բավարարող կոմունալ, սանիտարահիգիենիկ և հակահրդեհային անվտանգության անհրաժեշտ պայմաններով և համապատասխան անվտանգության համակարգով, երեխաների համար՝ նաև խնամքի և կրթության պայմաններով և համապատասխանի ՀՀ կառավարության սահմանած այլ չափանիշներին:

սկզբունքները նախատեսված են նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով¹²⁶: Սակայն այս սկզբունքները ներառված չեն քրեական և վարչական դատական վարույթների շրջանակներում¹²⁷: Ըստ հարցազրույցների մասնակիցների, «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում¹²⁸ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ է ներկայացվել՝ քրեական գործերով անչափահաս տուժողի կամ վկայի հարցաքննությունները բարեփոխելու վերաբերյալ, սակայն այն դեռ չի ընդունվել:

Երեխայի լավագույն շահերի գնահատումն ու որոշումը պահանջում են ընթացակարգային երաշխիքներ: Բացի այդ որոշման հիմնավորումը պետք է ցույց տա, որ այդ իրավունքը հստակ հաշվի է առնվել, պետք է բացատրեն, թե ինչպես է իրականացվել այդ իրավունքը տվյալ որոշման մեջ, այսինքն, թե ինչն է բխում երեխայի լավագույն շահերից, ինչ չափանիշների վրա է այն հիմնված և թե ինչ նշանակություն է տրվում երեխայի շահերին այլ նկատառումների համեմատ, անգամ եթե դրանք առավել ընդգրկուն քաղաքականության հարցեր են կամ առանձին դեպքեր¹²⁹: Այս առումով, ըստ հարցազրույցների մասնակիցների, գործնականում դժվարություններ են առաջանում երեխայի լավագույն շահերի որոշման և գնահատման հետ կապված՝ պայմանավորված համապատասխան մեթոդական ուղեցույցների և վերապատրաստված մասնագետների (խնամակալության և հոգաբարձության մարմինների և հանձնաժողովի անդամների, դատավորների, փաստաբանների, քննիչների, դատախազների, մանկավարժների, բժիշկների և երեխայի հետ աշխատող այլ մասնագետների) բացակայությամբ:

¹²⁶ Տե՛ս՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 8-րդ մասը և 203-րդ հոդվածը:

¹²⁷ Այս սկզբունքների կիրառման հետ կապված որոշ միջոցառումներ են նախատեսված «ՀՀ երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական» ծրագրով:

¹²⁸ Այսուհետ՝ ՔԳՕ:

¹²⁹ Տե՛ս՝ ԵԻԿ-ի ԹԻՎ 14 Ընդհանուր մեկնաբանությունը երեխայի լավագույն շահերի վերաբերյալ, 30 (6) կետը:

Հեղևարար Կուժածներին աջակցություն և օգնություն ցուցաբերելու համար պահանջվում է թե՛ Կուժած երեխաների առնչությամբ օրենսդրական որոշակի փոփոխությունների իրականացում՝ առանց խտրականության, թե՛ գործնականում դրա իրականացման գործուն մեխանիզմների ստեղծում:

Միջամտության ծրագրերը կամ միջոցառումները¹³⁰

Նպատակ ունենալով կանխելու և նվազագույնի հասցնելու երեխաների նկատմամբ սեռական բնույթի հանցագործությունների կրկնման վտանգը՝ Կոնվենցիայի 15-17 հոդվածներով նախատեսվում են հոգեբանական¹³¹, բժշկական¹³² և սոցիալական¹³³ միջամտության հարկադիր բնույթ չկրող¹³⁴ արդյունավետ ծրագրեր և միջոցառումներ, ինչպես նաև այնպիսի կառույցներ, որոնք կնպաստեն վերաինտեգրմանը:

Այս միջամտությունները նախատեսվում են ցանկացած պահի երեք խմբի համար՝

- 1) հետապնդվող անձանց,
- 2) դատապարտված անձանց և

¹³⁰ Տե՛ս՝ Կոնվենցիայի 15-րդ, 16-րդ և 17-րդ հոդվածները:

¹³¹ Օրինակ՝ ճանաչողական վարքային թերապիա կամ թերապիա կիրառելով հոգեբանական դինամիկ մոտեցում: Տե՛ս՝ Կոնվենցիայի բացատրական զեկույցի 102-րդ կետը:

¹³² Հիմնականում վերաբերում է հակահորմոնային թերապիային (բժշկական ամորձատում): Տե՛ս՝ Կոնվենցիայի 15-17 հոդվածները:

¹³³ Հիմնականում վերաբերում է հանցագործի սոցիալական վարքագիծը կարգավորելու և կայունացնելու միջամտություններին, օրինակ՝ որոշ վայրեր այցելելու կամ անձանց հանդիպելու արգելքը: Տե՛ս՝ Կոնվենցիայի 15-17 հոդվածները:

¹³⁴ Չպետք է լինեն քրեական պատժիչ համակարգի մաս և կարող են ներառվել առողջապահության և սոցիալական ապահովության համակարգերում: Տե՛ս՝ Կոնվենցիայի 15-17 հոդվածները:

3) երեխաների¹³⁵, ներառյալ նրանց, ովքեր իրենց սեռական վարքի հետ կապված խնդիրները լուծելու համար դեռևս չեն հասել քրեական պատասխանատվության ենթարկվելու տարիքին:

Այս առումով որոշ կարգավորումներ նախատեսված են ՀՀ քր. օր. նախագծով (հոդվածներ 116-124)¹ որպես անվտանգության միջոցներ, որոնք կիրառվում են այն դեպքերում, երբ դատարանը գտնում է, որ պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած անձը կրկին կարող է նման արարք կատարել կամ անվտանգության միջոցի կիրառումն անհրաժեշտ է անձի կամ հասարակության անվտանգությունն ապահովելու համար: Պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած անձի նկատմամբ կարող են կիրառվել անվտանգության հետևյալ միջոցները.

1) բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ¹

ա) հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողություն և հարկադիր բուժում,

բ) հոգեբուժական հաստատությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում,

գ) հոգեբուժական հիվանդանոցի հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում,

2) որոշակի վայրեր այցելելու արգելքի սահմանում և

3) հոգեբանական օգնություն ստանալու պարտականության ստանձնում:

Այսպիսով, անգամ նախագծով նախատեսված կարգավորումները մասամբ են ներառում Կոնվենցիայի պահանջները, ուստի վավերացման դեպքում այս միջոցառումների վերանայման անհրաժեշտության կառաջանա:

Բացի այդ, 2012թ.-ին մշակվեց մի նախագիծ¹³⁶, որով նախա-

¹³⁵Պետք է մշակվեն և հարմարեցված լինեն երեխաների զարգացման կարիքներին:

¹³⁶Տե՛ս՝

<http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=5128&Reading=0>
(վերջին անգամ դիտվել է 01.06.18թ.):

տեսվում էր հոգեբանի միջամտությունն ու քիմիական ստերջացման կիրառումն այն անձանց համար, ովքեր մտավախություն ունեն, որ կարող են կրկին կատարել երեխաների նկատմամբ սեռական հանցագործություններ, սակայն այն այդպես էլ չընդունվեց:

Ըստ հարցազրույցների մասնակիցների, թեպետ ՀԿ-ների կողմից անչափահասների համար վերափնտեգրման որոշ ծրագրեր իրականացվել են, սակայն դրանց թիրախը վերոնշյալ խմբի անչափահասները չէին: Օրենսդրական խնդիրների է անդրադարձել նաև ՄԱԿ-ի երեխայի իրավունքների հանձնաժողովն իր վերջին դիտարկումներում: Հանձնաժողովը կոչ է արել պետությանը նաև ներդնել վերականգնման և վերափնտեգրման արդյունավետ ծրագրեր, որոնք, մասնավորապես, ուղղված կլինեն քրեակատարողական հիմնարկներից դուրս եկող երեխաներին¹³⁷:

Հետևաբար համապատասխան միջամտության ծրագրերի մշակման և օրենսդրորեն դրանց ամրագրման անհրաժեշտություն է առաջանում՝ ապահովելով նրանց հասանելիությունը:

Քրեական իրավունքը

Կոնվենցիան վավերացնող կողմերից պահանջում է քրեականացնել երեխաների նկատմամբ կատարվող բոլոր սեռական հանցագործությունները, այդ թվում՝ տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների միջոցով կատարված հանցագործությունները, ինչպես նաև արտասահմանում/այլ երկրում կատարված հանցագործությունները:

¹³⁷Տե՛ս՝ ՄԱԿ-ի երեխայի իրավունքների հանձնաժողովի Ամփոփիչ դիտարկումների 52-րդ կետը:

Սեռական չարաշահումը¹³⁸

Կոնվենցիան որպես հանցավոր արարքներ թվարկում է մի շարք գործողություններ¹³⁹, որոնց սահմանումների համապատասխանեցումը¹⁴⁰ նպաստում է տվյալ հանցագործությունների դեմ պայքարին թե՛ տեղական, և թե՛ միջազգային մակարդակում¹⁴¹:

Երեխայի նկատմամբ սեռական չարաշահման արգելքն ամրագրված է ԵԻԿ-ի 19-րդ և 34-րդ հոդվածներով, ինչպես նաև «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով: Հարկ է նշել, որ վերջինս ընդհանուր առմամբ կատարելագործման կարիք ունի, հաշվի առնելով թիվ N8 (2006) Ընդհանուր մեկնաբանությունը (ԸՄ)՝ Երեխայի մարմնական պատժի և պատժի այլ դաժան կամ նվաստացնող ձևերի դեմ պաշտպանության իրավունքի վերաբերյալ և թիվ N13 (2011) Ընդհանուր մեկնաբանությունը՝ Երեխայի բռնության բոլոր ձևերից զերծ մնալու իրավունքի վերաբերյալ:

Ինչ վերաբերում է «բռնություն» սահմանմանը, ապա համաձայն թիվ N13 ԸՄ-ի՝ «բռնություն»-ը տվյալ համատեքստում սահմանվում է որպես «ֆիզիկական կամ հոգեբանական բռնության, վիրավորանքի կամ չարաշահման, անտեսման կամ անուշադրության մատնելու, կոպիտ վերաբերմունքի կամ շահագործման, ներառյալ՝ սեռական չարաշահման բոլոր ձևերը, ինչպես թվարկված են Կոնվենցիայի 19-րդ հոդվածի 1-ին մասում»: Այս առումով խնդիրներ են կարող առաջանալ ՀՀ նոր քր. օր.-ի նախագծի կարգավորումների շրջանակներում, քանզի բռնության սահմանումն ընկալվում է ավելի նեղ, որպես այդպիսին նշված է *«այլ մարդու նկատմամբ դիտավորյալ ֆիզիկական ներգործությունը կամ այդ եղանակով նրան ֆիզիկական կամ հոգե-*

¹³⁸ Տե՛ս՝ Կոնվենցիայի 18-րդ հոդվածը:

¹³⁹ Տե՛ս՝ Կոնվենցիայի 18-23 հոդվածները:

¹⁴⁰ Նշված հանցագործությունների սահմանումները ներկայացնում են նվազագույն կոնսենսուս, ինչը չի խոչընդոտում ներպետական օրենսդրությամբ լրացնելուն կամ ավելի բարձր չափանիշներ սահմանելուն: Տե՛ս՝ Կոնվենցիայի բացատրական զեկույցի 113-րդ կետը:

¹⁴¹ Տե՛ս՝ Կոնվենցիայի բացատրական զեկույցի 112-րդ կետը:

կան վնաս պատճառելը, որը կատարվում է նրա կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով», **հետևաբար այդ սահմանումը երեխաների առնչությամբ լրամշակման կարիք ունի:**

Մինչ այժմ բռնության սահմանումը քննչական և դատական պրակտիկայում կիրառվում է նախադեպի հիման վրա: Մասնավորապես ԱՐԴ/0176/01/11 քրեական գործով կայացված որոշմամբ Վճռաբեկ դատարանը նշել է, որ «բռնությունը՝ որպես քրեորեն հետապնդելի արարք, դիտավորությամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք է, որի արդյունքում անձը զրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք»: Սակայն, այս ձևակերպումը, կիրառելի լինելով քրեական իրավունքում և ձևավորված դատական պրակտիկայում, նույնպես ամբողջությամբ չի արտացոլում երեխաների նկատմամբ բռնության բոլոր հատկանիշները:

Կոնվենցիան կոչ է անում քրեականացնել հետևյալ դիտավորյալ գործողությունները՝

ա) սեռական բնույթի գործողություններով¹⁴² զբաղվելը երեխայի հետ, ով չի հասել սեռական հարաբերությունների համար ներպետական օրենսդրությամբ սահմանված տարիքին¹⁴³: ՀՀ-ում այդ տարիքը 16 տարեկանն է և քրեականացված է ՀՀ քր. օր.-ի 141-րդ հոդվածով,

բ) երեխայի հետ սեռական բնույթի գործողություններով զբաղվելը, երբ 1) կիրառվում են հարկադրանք, ուժ կամ սպառնալիքներ, կամ 2) տեղ է գտնում երեխայի նկատմամբ ունեցած վստահության, իշխանության կամ ազդեցության չարաշահում, այդ թվում և ընտանիքի ներսում, կամ 3) չարաշահվում է երեխայի առանձնապես ան-

¹⁴²Մեկնաբանությունը թողնված է ներպետական օրենսդրությանը: Տե՛ս՝ Կոնվենցիայի բացատրական զեկույցի 127-րդ կետը:

¹⁴³Այս կետի դրույթները չեն տարածվում անչափահասների միջև փոխադարձ համաձայնությամբ կատարվող սեռական բնույթի գործողությունների վրա: Տե՛ս՝ Կոնվենցիայի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:

պաշտպան վիճակը՝ մասնավորապես սահմանափակ մտավոր կամ ֆիզիկական ունակությունների կամ կախվածության մեջ գտնվելու հանգամանքներում:

Վերը նշված «բ» կետով նախատեսված գործողություններն ամրագրված են ՀՀ քր. օր.-ի 138, 139 և 140-րդ հոդվածներով, ընդ որում երեխայի նկատմամբ դրանց կատարումը հանդիսանում է հանցագործությունը ծանրացնող հանգամանք: Հատկանշական է, որ համաձայն ՀՀ քր. օր.-ի 138-րդ և 139-րդ հոդվածների անօգնական վիճակում գտնվող է համարվում այն անձը, ով որոշակի հանգամանքների ուժով մշտապես կամ ժամանակավորապես զրկված է եղել հանցավորին դիմադրություն ցույց տալու կամ իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը գիտակցելու կամ հասկանալու հնարավորությունից, ինչպես նաև 12 տարին չլրացած անձը:

Ներկայումս առաջնային անհրաժեշտություն է առաջացել «բռնություն» եզրույթը վերանայելու՝ հաշվի առնելով երեխաների առանձնահատկությունները և մեկնաբանելու Կոնվենցիայով նախատեսված դրույթները՝ ՀՀ գործող քրեական օրենսդրության համապետքաբար:

Հանցագործություններ՝ կապված երեխայի մարմնավաճառության հետ ¹⁴⁴

Կոնվենցիայի համաձայն՝ քրեական պատասխանատվություն պետք է սահմանվի նաև հետևյալ դիտավորյալ գործողությունների համար՝

ա) մարմնավաճառությամբ զբաղվելու մեջ երեխային հավաքագրելը կամ նրան դրդելը - զբաղվելու մարմնավաճառությամբ. այս գործողությունը որակվում է որպես երեխայի թրաֆիքինգ (ՀՀ քր. օր.-ի 132.2-րդ հոդված)՝ հաշվի առնելով, որ երեխայի համաձայնությունն ա-

¹⁴⁴ Տե՛ս՝ Կոնվենցիայի 19-րդ հոդվածը:

ռոչինչ է, եթե նրան ներգրավվում են պոռնկության մեջ,

բ) երեխային հարկադրելը զբաղվելու մարմնավաճառությամբ կամ դրանից օգուտ քաղելը, կամ այդ նպատակով երեխային այլ կերպ շահագործելը - նույնպես որակվում է ՀՀ քր. օր.-ի 132.2-րդ հոդվածով,

գ) մանկական մարմնավաճառության ծառայություններից օգտվելը - **այս գործողությունը քրեականացված է մասնակի՝** միայն այն համատեքստում, երբ երեխան հանդիսանում է շահագործման զոհ, ապա արարքը որակվում է ՀՀ քր. օր.-ի 132.3-րդ հոդվածով, իսկ եթե երեխան ինքն է զբաղվում մարմնավաճառությամբ և նրա ծառայություններից որևէ մեկն օգտվում է, ապա այդ արարքը քրեորեն պատժելի չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ երեխան 16 տարեկանից ցածր է և սեռական հարաբերություն ունեցողն ակնհայտ գիտի այդ մասին (տվյալ դեպքում արարքը որակվում է ՀՀ քր. օր.-ի 141-րդ հոդվածով):

Կոնվենցիան սահմանում է նաև «երեխայի մարմնավաճառություն» եզրույթը, որը նշանակում է երեխային վճարի կամ վճար խոստանալու կամ ցանկացած այլ վարձատրության դիմաց սեռական բնույթի գործողությունների համար օգտագործելը՝ անկախ այն հանգամանքից, թե այդ վարձատրությունը, վճարը կամ խոստումը ում է տրվում՝ երեխային, թե երրորդ անձին:

2005թ.-ին Հայաստանը վավերացրել է ԵԻԿ-ի մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրությունը, որը նույնպես սահմանում է երեխայի մարմնավաճառության եզրույթը¹⁴⁵, սակայն Լանզարոտեի կոնվենցիայով նախատեսված սահմանումն ավելի համապարփակ է:

Բացի վերոնշյալ գործողություններից ՀՀ-ում քրեականացված է նաև երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր

¹⁴⁵Երեխաների մարմնավաճառություն նշանակում է երեխայի օգտագործումը սեռական բնույթի գործողության մեջ՝ վարձատրության կամ ցանկացած այլ տեսակի հատուցման դիմաց: Տե՛ս՝ Կոնվենցիայի 20-րդ հոդվածի բ կետը:

կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններում ներգրավելը, ինչպես նաև անչափահասի պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը: Սակայն հարկ է նշել, որ ներպետական օրենսդրությամբ «երեխայի մարմնավաճառությունը» որպես առանձին եզրույթ սահմանված չէ:

Հեղևաբար երեխաների մարմնավաճառության դեմ արդյունավետ պայքար իրականացնելու համար անհրաժեշտ է նախ հստակեցնել կիրառվող եզրույթները, ինչպես նաև քրեականացնել մարմնավաճառությամբ զբաղվող երեխաների ծառայություններից օգտվելը՝ անկախ նրանց շահագործվելու հանգամանքից և երեխայի տարիքից:

Հանցագործություններ՝ կապված մանկական պոռնոգրաֆիայի հետ ¹⁴⁶

Այս հոդվածով քրեական պատասխանատվություն պետք է սահմանվի¹⁴⁷ ապօրինի կերպով հետևյալ դիտավորյալ գործողությունների համար՝ ա) երեխայի պոռնոգրաֆիայի արտադրությունը, բ) երեխային պոռնոգրաֆիայի առաջարկը կամ տրամադրումը, գ) երեխայի պոռնոգրաֆիայի տարածումը կամ փոխանցումը, դ) երեխայի պոռնոգրաֆիայի ձեռքբերումը իր կամ մեկ այլ անձի համար, ե) երեխայի պոռնոգրաֆիա ունենալը և զ) տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների միջոցով միտումնավոր կերպով երեխայի պոռնոգրաֆիա մուտք գործելուն նպաստելը:

Այս գործողությունների մի մասը քրեականացված են ՀՀ քր. օր.-ի 263-րդ հոդվածի 1-ին մասով՝ առանց հստակեցնելու, թե այդ գործողությունը կատարվել է երեխայի, թե չափահասի նկատ-

¹⁴⁶ Տե՛ս՝ Կոնվենցիայի 20-րդ հոդվածը:

¹⁴⁷ Կոնվենցիան նախատեսում է, որ վավերացնող կողմերը կարող են իրենց իրավունք վերապահել սույն հոդվածով նախատեսված գործողությունները որոշ դեպքերում ամբողջությամբ կամ մասամբ չկիրառել: Տե՛ս՝ Կոնվենցիայի 21-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը:

մամբ¹⁴⁸: Հարկ է նշել, որ Կոնվենցիայի իրականացման զեկույցն¹⁴⁹ ավելի մանրամասն սահմանումներ է ներկայացնում՝ տարանջատելով երեխաների կողմից, իրենց նախաձեռնությամբ կատարված գործողությունները/արարքները և դրանց տեսակները:

Այս հոդվածում Կոնվենցիան սահմանում է «մանկական պոռնոգրաֆիա» եզրույթը, ինչը համարվում են բոլոր այն նյութերը, որտեղ երեխան պատկերված է բացահայտ սեռական բնույթի իրական գործողություններ կատարելիս կամ դրանք ձևացնելիս, կամ երեխայի սեռական օրգանների ցանկացած ցուցադրում՝ գլխավորապես սեռական նպատակներով:

Հայաստանը վավերացրել է մի շարք միջազգային փաստաթղթեր, մասնավորապես վերոնշյալ Կամընտիր արձանագրությունը և ԵԽ-ի «Կիբեռահանցագործությունների մասին կոնվենցիան», որտեղ ներկայացված են «երեխայի պոռնոգրաֆիայի» հետ կապված սահմանումները և առանձին գործողությունները¹⁵⁰: Չնայած այս հանգամանքին՝ գործող ՀՀ քր. օր.-ում դեռևս բացթողումներ կան: *Այսպիսով, ՀՀ քր. օր.-ի 263-րդ հոդվածով (մասնավորապես 2-րդ մասում) նախատեսված չի երեխայի պոռնոգրաֆիայի փոխանցումը, ձեռքբերումը իր կամ մեկ այլ անձի համար և տեղեկարկական և հաղորդակցման տեխնոլոգիաների միջոցով միտումնավոր կերպով երեխայի պոռնոգրաֆիա մուտք ստանալը:*

¹⁴⁸ ՀՀ քր. օր.-ի 263-րդ հոդվածի 1-ին մասով քրեորեն պատժելի է պոռնկագրական նյութեր կամ առարկաներ, այդ թվում՝ տպագիր հրատարակություններ, կինոյի և տեսաֆիլմերի նյութեր, պատկերներ կամ պոռնկագրական բնույթի այլ առարկաներ տարածելը, գովազդելը, իրացնելը, ինչպես նաև այդ նպատակով պատրաստելը, եթե բացակայում են սույն օրենսգրքի 132-րդ, 132.2-րդ հոդվածներով նախատեսված հանցագործության հատկանիշները:

¹⁴⁹See, para 10, Second Monitoring Round on Protecting Children against Sexual Exploitation and Abuse Facilitated by Information and Communication Technologies, Lanzarote Committee, 2017: <https://rm.coe.int/thematic-questionnaire-for-the-2nd-monitoring-round-on-the-protection-/168075f307>, last accessed on 28.04.18.

¹⁵⁰ Տե՛ս՝ Կամընտիր արձանագրության 2-րդ հոդվածի «գ» կետը, ինչպես նաև Կիբեռահանցագործության կոնվենցիայի 9-րդ հոդվածը:

Հարկ է նշել, որ ՀՀ քր. օր-ի 263-րդ հոդվածի 2-րդ մասում նշվում է միայն «համակարգչային համակարգը», մինչդեռ «տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները» ավելի լայն հասկացություն են, քան «համակարգչային համակարգը»: Նոր քր. օր-ի նախագիծն ընդլայնում է արգելված գործողությունները, սակայն կրկին չի նախատեսում տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների միջոցով դիտավորությամբ երեխայի պոռնոգրաֆիա մուտք գործելուն նպաստելը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանն այս ոլորտում արդեն իսկ վավերացրել է մի շարք միջազգային պայմանագրեր, անհրաժեշտ է համապատասխան լրացումներ կատարել ՀՀ քր. օր.-ում:

Հետևաբար ՀՀ քր. օր.-ի 263-րդ հոդվածը լրամշակման կարիք ունի:

Հանցագործություններ՝ կապված պոռնոգրաֆիկ ներկայացումներում երեխայի մասնակցության հետ¹⁵¹

Նախատեսված գործողությունները՝ կապված երեխայի պոռնոգրաֆիկ ներկայացումներում մասնակցության հետ, մասնավորապես՝ պոռնոգրաֆիկ ներկայացումների մեջ երեխային հավաքագրելը, կամ նման ներկայացումներին մասնակցելուն նրան դրդելը, պոռնոգրաֆիկ ներկայացումներին մասնակցելուն երեխային հարկադրելը, կամ դրանից օգուտ քաղելը, կամ այդ նպատակներով երեխային այլ կերպ շահագործելը, երեխաների մասնակցությամբ պոռնոգրաֆիկ ներկայացումներին (գիտակցաբար) հաճախելը կարգավորված են ներպետական օրենսդրությամբ և որակվում են ՀՀ քր. օր.-ի 132.2-րդ կամ 166-րդ հոդվածներով՝ պայմանավորված երեխայի հանդեպ

¹⁵¹ Տե՛ս՝ Կոնվենցիայի 21-րդ հոդվածը:

կատարված գործողության տեսակից¹⁵²: Թեև Կոնվենցիան չի սահմանում «պոռնոգրաֆիկ ներկայացումներում» եզրույթը, այն կարելի է գտնել թիվ 2011/92/EU հրահանգում¹⁵³: Ըստ վերջինիս այն նշանակում է հանդիսատեսին ուղղված կենդանի ներկայացում (*live performance*), այդ թվում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով, որտեղ i) երեխան զբաղվում է բացահայտ սեռական բնույթի իրական գործողություններով կամ ձևացնում դրանք, ii) ցուցադրվում են երեխայի սեռական օրգանները՝ հիմնականում սեռական նպատակներով: Ինչպես և նախորդ հոդվածներում, Կոնվենցիան պահանջում է, որպեսզի քրեականացվի վերոնշյալ գործողությունների թե՛ առաջարկը, թե՛ պահանջարկը:

Հետևաբար ՀՀ քր.օր.-ում անհարժեշտ է սահմանել «պոռնոգրաֆիկ ներկայացումներ» եզրույթը:

Երեխաներին սեռական հարաբերությունների առաջարկ անելը¹⁵⁴

Կոնվենցիան առաջարկում է կողմերին քրեական պատասխանատվություն սահմանել *գրումինգի* համար՝ չափահաս անձի կողմից դիտավորությամբ՝ 18-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տարիքը չլրացած երեխային տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների միջոցով հանդիպման առաջարկություն անելու համար՝ նրա նկատմամբ Կոնվենցիայի 18-րդ հոդվածի 1-ին կետին և 20-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետին համապատասխան սահմանված

¹⁵² Հարկ է նշել, որ շահագործման նպատակով երեխաներին պոռնոգրաֆիայի և պոռնոգրաֆիկ նյութերի մեջ օգտագործելը արգելված է նաև ԵԻԿ 34-րդ հոդվածով:

¹⁵³ See Article 2, Directive 2011/92/EU of the European Parliament and of the Council of 13 December 2011 on combating the sexual abuse and sexual exploitation of children and child pornography, and replacing Council Framework Decision 2004/68/JHA.

¹⁵⁴ Տե՛ս՝ Կոնվենցիայի 23-րդ հոդվածը:

որևէ հանցագործություն կատարելու նպատակով, երբ նման առաջարկությանը հետևել են գործնական քայլեր հանդիպումն իրականացնելու համար¹⁵⁵:

«Հ քր. օր.-ի 142-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը պատասխանատվություն է սահմանում էլեկտրոնային հաղորդակցության ցանցի կիրառմամբ անառակաբարո գործողություններ կատարելու համար: Էլեկտրոնային հաղորդակցության ցանցի հասկացությունը տրված է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում, որը վերանայման անհրաժեշտություն է առաջանում, քանի որ «Էլեկտրոնային հաղորդակցությունը» ավելի նեղ հասկացություն է, քան «տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները»: Բացի այդ, անառակաբարո գործողություններն ինքնին պետք է պարունակեն ցինիկության, անպարկեշտության, գոեհկության տարր, իսկ գրումինգը կարող է իրականացվել առանց նման եղանակների կիրառման:

Ներկաբար անհրաժեշտ է լրամշակել ՀՀ քր. օր.-ի 142-րդ հոդվածը:

Իրավասությունը¹⁵⁶

«Հ քր. օր.-ի 14-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ քր. օր.-ը տարածվում է ՀՀ տարածքում հանցանք կատարած բոլոր անձանց նկատմամբ (անկախ քաղաքացիությունից): ՀՀ տարածքում կատարված է համարվում այն հանցանքը, որը՝

- 1) սկսվել, շարունակվել կամ ավարտվել է ՀՀ տարածքում,
- 2) հանցակցությամբ կատարվել է այն անձանց հետ, ովքեր հանցավոր գործունեություն են իրականացրել այլ պետության տարածքում:

Բացի այդ ՀՀ դրոշի տակ գտնվող կամ ՀՀ տարբերանշանը

¹⁵⁵ Նույն տեղում:

¹⁵⁶ Տե՛ս՝ Կոնվենցիայի 25-րդ հոդվածը:

կրող նավի կամ թռիչքում գտնվող օդանավի կամ օդային այլ սարքի վրա հանցանք կատարած անձը, անկախ դրանց գտնվելու վայրից, ենթակա է քրեական պատասխանատվության ՀՀ քր. օր.-ով, եթե ՀՀ միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ¹⁵⁷:

ՀՀ քր. օր.-ի 15-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ տարածքից դուրս հանցանք կատարած ՀՀ քաղաքացիները, ինչպես նաև ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձինք ենթակա են քրեական պատասխանատվության ՀՀ քր. օր.-ի համապատասխան հոդվածներով, եթե նրանց կատարած արարքը ճանաչված է հանցագործություն դրա կատարման վայրի պետության օրենսդրությամբ, և եթե նրանք չեն դատապարտվել այլ պետությունում: Այսինքն, եթե ՀՀ քաղաքացին կամ ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձը Կոնվենցիայով նախատեսված հանցագործությունը կատարում է այլ պետության տարածքում, բայց գտնվում է ՀՀ-ում, ապա նա ենթարկվում է քրեական պատասխանատվության այն պայմանով, որ այդ երկու պետությունների տարածքում այդ արարքը համարվում է հանցագործություն և ինչի համար նա դատապարտված չի եղել:

Այսինքն բերված իրավիճակի առնչությամբ համապատասխանեցման կարիքն առկա է:

Որոշակի մտահոգություն է առաջացնում սեքս տուրիզմը, այսինքն առավել բարենպաստ իրավական դաշտ ունեցող կամ տնտեսապես առավել աղքատ երկրներ ճանապարհորդությունների դեպքերը՝ տեղացիների հետ սեռական հարաբերություններ ունենալու նպատակով, սովորաբար վարձատրման դիմաց: Նման իրավիճակներ Հայաստանում հազվադեպ են գրանցվում¹⁵⁸, բայց դեպքերը հնարավոր է ավելանալու միտում ունենան՝ մասնավորապես հաշվի առնելով զբոսաշրջիկների թվի աճը:

¹⁵⁷ Նույն նորմը վերաբերելի է նաև այն դեպքերում, երբ հանցանքը կատարվել է ՀՀ ռազմական նավի կամ օդանավի վրա՝ անկախ դրա գտնվելու վայրից:

¹⁵⁸ Օրինակ՝ <http://www.1in.am/1491192.html>; <http://medialab.am/news/id/836> և այլն:

Հավաքական պատասխանատվություն և պատժամիջոցներն ու միջոցառումները¹⁵⁹

Երեխաների սեռական շահագործման և սեռական բռնության համար հողվածներն ազատագրվումը նախատեսում են որպես հիմնական պատժատեսակ, ինչպես պահանջվում է Կոնվենցիայով: ՀՀ քր. օր.-ի նախագծի համաձայն՝ իրավաբանական անձանց նկատմամբ կկիրառվի քրեական պատասխանատվություն, սակայն գործող օրենսգիրքը նման պատասխանատվություն չի սահմանում:¹⁶⁰

Երեխաների շահագործման համար գույքի բռնագրավումը նախատեսված է որպես լրացուցիչ պատիժ, իսկ սեռական բռնությունների և պոռնկությանը նպաստելու դեպքերում՝ ոչ, ինչը ենթադրում է, որ ՀՀ քր. օր.-ի 262-րդ հոդվածում անհրաժեշտ է կատարել փոփոխություն, քանի որ մեկնաբանվող հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նման հանցագործությունների կատարման արդյունքում սրացված գույքը պետք է առգրավվի ու բռնագրավվի:

Կոնվենցիայով նախատեսված բոլոր հանցագործությունները սահմանվում են որպես «դիտավորյալ» կատարված, ինչը հնարավորություն է ընձեռում ՀՀ ԸՕ-ի 59-րդ հոդվածի 2-րդ մասի¹⁶¹ կիրառմամբ ծնողին զրկել ծնողական իրավունքից: Ծնողական իրավունքներից զրկելը չի հանդիսանում պատժատեսակ, սակայն 2017թ.-ի դեկտեմբերի 21-ի փոփոխություններից հետո այդ միջոցի կիրառումը դառնում է պարտադիր պահանջ և չի վերապահված դատարանի

¹⁵⁹ Տե՛ս՝ Կոնվենցիայի 26-րդ և 27-րդ հոդվածները:

¹⁶⁰ Տե՛ս՝ <https://www.e-draft.am/projects/496/about> (վերջին անգամ դիտվել է 13.05.2018թ.): Այդ նախագծի 131-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձի նկատմամբ կարող են նշանակվել հետևյալ պատիժները՝

- տուգանք,
- գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցում,
- հարկադիր լուծարում,
- ՀՀ տարածքում գործունեություն իրականացնելու արգելք:

¹⁶¹ Ծնողը զրկվում է ծնողական իրավունքներից, եթե դատապարտվել է իր երեխայի դեմ ուղղված դիտավորյալ հանցագործության համար:

հայեցողությանը՝ ինչպես եղել է մինչ փոփոխությունները¹⁶²: *Այսինքն համապարասխանեցման կարիքն առկա է:*

Ծանրացուցիչ հանգամանքները¹⁶³

Քննարկվող հոդվածը նախատեսում է մի շարք ծանրացնող հանգամանքներ, որոնց մեծամասնությունը ներառված է ՀՀ քր. օր.-ի թե՛ գործող տարբերակում, թե՛ նախագծում: Սակայն երկու կետ չի նախատեսված որպես ծանրացնող հանգամանք՝ ...բ) հանցագործությանը նախորդել են կամ այն ուղեկցվել է խոշտանգումներով կամ կոպիտ բռնության դրսևորումներով և ...է) հանցագործությունը կատարած անձը նախկինում դատված է եղել համանման հանցագործություններ կատարելու համար:

Վերը նշված «բ» կետով սահմանված հանգամանքը մասնակի ներառված է սեռական որոշ հանցագործություններում, օրինակ՝ բռնաբարության և սեքսուալ բնույթի բռնի գործողությունների դեպքում նշված է «կատարվել են տուժողի կամ այլ անձի նկատմամբ առանձին դաժանությամբ» ծանրացնող հանգամանքը: Կոնվենցիայով նախատեսված մյուս հանցագործություններում այս ծանրացնող հանգամանքը բացակայում է:

«է» կետը որպես ծանրացնող հանգամանք չներառելը պայմանավորված է նրանով, որ 2011թ.-ին կատարված փոփոխությունների համաձայն ՀՀ քր. օր.-ից առհասարակ հանվել է կրկնակիությունը, և անձի նախկին դատվածությունը հաշվի չի առնվում նրան պատասխանատվության ենթարկելիս: Եթե լինի այնպիսի իրավիճակ, երբ Կոնվենցիայով նախատեսված հանցագործությունը կատարի այնպիսի անձ, ում նկատմամբ օրենքով սահմանված դեպքերում և կարգով

¹⁶²Դատական դեպարտամենտում նման բնույթի վիճակագրությունը դեռ բացակայում է՝ հավանաբար ուժի մեջ մտնելու ժամկետի կարճ լինելու պատճառով:

¹⁶³ Տե՛ս՝ Կոնվենցիայի 28-րդ հոդվածը:

պետք է նշանակվի պատիժ դատավճիռների համակցությամբ¹⁶⁴, ապա այս դեպքում նրա դատապարտված լինելը հաշվի կառնվի՝ նշանակված պատժի չկրած մասը հաշվառելով:

Հեղևաբար նշված ծանրացնող հանգամանքների ներառման անհրաժեշտությունը քննարկման կարիք ունի:

Հեղաքննությունը, դատական հետապնդումը և ընթացակարգային օրենսդրությունը

Սկզբունքները և պաշտպանության ընդհանուր միջոցառումները¹⁶⁵

Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ¹⁶⁶: Օրենքով նախատեսված դեպքում, պետությունը երաշխավորում է անվճար իրավաբանական օգնություն¹⁶⁷: Քրեական գործերով վարույթն իրականացնող մարմինն անվճար իրավաբանական օգնությունն¹⁶⁸ ապահովում է հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով¹⁶⁹: Ի թիվս այլոց, հանրային պաշտպանի գրասենյակն անվճար իրավաբանական օգնությունը տրամադրում է նաև հետևյալ անձանց՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված 0-ից բարձր անա-

¹⁶⁴ Տե՛ս՝ ՀՀ քր. օր-ի 67-րդ հոդված:

¹⁶⁵ Տե՛ս՝ Կոնվենցիայի 30-րդ և 31-րդ հոդվածները:

¹⁶⁶ Տե՛ս՝ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը:

¹⁶⁷ Տե՛ս՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը 6-րդ հոդվածի 4-րդ մասը:

¹⁶⁸ Տե՛ս՝ նույն տեղը, 41-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը: Անվճար իրավաբանական օգնությունը ներառում է խորհրդատվությունը՝ ներառյալ իրավաբանական տեղեկատվության տրամադրումը և ներկայացուցչությունը կամ պաշտպանությունը քրեական, քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով, քրեական գործով մինչդատական վարույթում, ՀՀ առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանում:

¹⁶⁹ Տե՛ս՝ նույն տեղը, 41-րդ հոդվածի 4-րդ մասը:

պահովության միավոր ունեցող ընտանիքի անդամներին, առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց, անվճարունակ այն ֆիզիկական անձանց, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում, օրենքով սահմանված կարգով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձանց¹⁷⁰: Օրենքով նախատեսված դեպքում և կարգով փաստաբանը կարող է իրավաբանական օգնություն ցույց տալ նաև վկային¹⁷¹: Ինչպես երևում է վերոնշյալից, այն դեպքերում, երբ երեխան առանց ծնողական խնամքի չէ կամ ընտանիքը ներառված չէ անապահովության գնահատման համակարգում, երեխան հնարավորություն չունի ստանալու անվճար իրավաբանական օգնություն: Օրենքը չի նախատեսում նաև վկա հանդիսացող երեխաների համար անվճար իրավաբանական օգնություն: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը երեխայակենտրոն տեղեկատվության տրամադրման վերաբերյալ օրենսդրական պահանջ չի նախատեսում: Ըստ հարցազրույցների մասնակիցների, հանրային պաշտպաններն աշխատում են գերծանրաբեռնված, քանզի նրանց թիվը շատ քիչ է, և նրանք աշխատում են ոչ լրիվ դրյուքաչափով: Հանրային պաշտպանների գործունեության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է պետության կողմից հատկացվող հաստիքների քանակի ավելացում: Մասնակիցների կողմից նշվել է, որ ցանկալի է զարգացնել երեխայի պաշտպանությամբ զբաղվող միջազգային կառույցների և փաստաբանների միջև համագործակցությունը: Մասնակիցները նշել են նաև, որ տուժող կամ վկա հանդիսացող երեխաների համար, այդ թվում՝ տեսողական կամ լսողական խնդիրներ ունեցողների համար, չկան իրագեկ-

¹⁷⁰ Տե՛ս՝ նույն տեղը, 41-րդ հոդվածի 5-րդ մասը:

¹⁷¹ Տե՛ս՝ նույն տեղը, 5-րդ հոդվածի 2-րդ մասը:

ման տպագիր տեղեկատվական նյութեր կամ տեսահոլովակներ¹⁷²:

Երեխաների կամ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի եղանակով հասանելի աջակցության և ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը, ինչպես նաև անվճար իրավաբանական օգնության վերաբերյալ երաշխիքները նախատեսված են «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» մասին ՀՀ օրենքով¹⁷³, սակայն այս պահին դժվար է գնահատական տալ այս երաշխիքների գործնական կիրառմանը:

Դատավարությանը մասնակցող անձանց իրավունքների և պարտականությունների պարզաբանումը, դրանց իրականացման հնարավորության ապահովումը սահմանված է ՀՀ ՔԴՕ-ի 101-րդ հոդվածով: Քրեական դատավարությանը մասնակցող կամ հանցագործության մասին հաղորդում տվող անձանց պաշտպանությունը¹⁷⁴

¹⁷² See, for example videos prepared by European Union Agency for Fundamental Rights about child-friendly justice` <https://www.youtube.com/watch?v=BNB-80YIIEQ>, Children and Justice: your rights, FRA, 2015; <https://www.youtube.com/watch?v=DyZ7QGBNSE8>, Children and Justice: your right to protection and legal representation, FRA, 2015; https://www.youtube.com/watch?v=N2WZatf_Z2E, Children and Justice: professionals' perspective and experiences, FRA, 2015; <https://www.youtube.com/watch?v=llrZ10dh61w> Children and Justice: your right to information, FRA, 2015; <https://www.youtube.com/watch?v=3FFJZFM5Cn8>, Children and Justice: your right to be heard, FRA, 2015.

¹⁷³Տե՛ս՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը:

¹⁷⁴Սյո թվում՝ պաշտպանության միջոցները, քրեական պատասխանատվության ենթարկելու հավանականության մասին նախազգուշացնելը, պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը, անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույքը պահպանելը, անհատական պաշտպանության միջոցներ տրամադրելը և վտանգի մասին հայտնելը, վերահսկողության տեխնիկական միջոցներ օգտագործելը և հեռախոսային կամ այլ հաղորդումները գաղտնալսելը, պաշտպանվող անձի քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալու անվտանգությունն ապահովելը,

նախատեսված են ՀՀ ՔԴՕ-ի 98-99 հոդվածներով, սակայն դրանց գործնական իրականացումը պայմանավորված է ֆինանսական ծախսերի հետ, որոնք մինչ այսօր կարգավորված չեն:

Ներպետական օրենսդրությունը հնարավորություն չի ընձեռում խմբերին, հիմնադրամներին, միություններին կամ կառավարական և ոչ-կառավարական կազմակերպություններին օրենսդրական կամ այլ միջոցներով, ներքին օրենսդրությամբ նախատեսված պայմանների համաձայն հանցագործությունների քրեական հետաքննության ընթացքում օգնություն ցուցաբերելու և/կամ աջակցելու տուժածներին՝ նրանց համաձայնության դեպքում: հանցագործությունների քրեական հետաքննությունների ընթացքում: Իրավապաշտպան կառույցի ներկայացուցիչները նշել են, որ դիմել են համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարելու պահանջով, սակայն, փոփոխություններ չեն իրականացվել: Հաշվի առնելով երեխայի ֆիզիկական և մտավոր անհասունությունը, երեխան կարիք ունի հատուկ պաշտպանության՝ ներառյալ պատշաճ իրավական պաշտպանության, ուստի պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի ներպետական օրենսդրությամբ հնարավորինս լայն իրավական պաշտպանության երաշխիքներ սահմանելու համար, այդ թվում հնարավորություն ընձեռելով վերոնշյալ կառույցներին դատարաններում/դատական վարույթներում ներկայացնելու երեխաներին և պաշտպանելու նրանց շահերը: Ելնելով վերոգրյալից՝ օրենսդրական փոփոխության անհրաժեշտություն է առաջանում՝ մասնավորապես որոշ կառույցներին լիազորելով օգնություն և աջակցություն իրականացնելու գործառույթը:

Հեղևաբար անհրաժեշտ է ապահովել անվճար իրավաբանա-

կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց ընտրելը, բնակության այլ վայր փոխադրելը, ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը կամ պաշտպանվող անձի արտաքինը փոխելը, աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոփոխելը, դատական նիստերի դահլիճից առանձին անձանց հեռացնելը կամ դռնփակ դատական քննություն անցկացնելը, պաշտպանվող անձի իրավունքները և պարտականությունները, պաշտպանության միջոցների դադարեցման հիմքերը և կարգը:

կան օգնության տրամադրման օրենսդրական համապատասխանեցումը միջազգային պահանջներին՝ անկախ հանցագործության տեսակից:

Վաղեմության ժամկետը¹⁷⁵

Կոնվենցիան կոչ է անում կողմերին վերոնշյալ հանցագործությունների համար սահմանելու այնպիսի վաղեմության ժամկետներ, որոնք բավարար կլինեն տուժողի չափահաս դառնալուց հետո (հասունության և անկախության որոշակի մակարդակի հասնելու և իրենց հետ կատարվածի մասին բարձրաձայնել ի վիճակի լինելու համար) արդյունավետ հետաքննություն նախաձեռնելու, ինչպես նաև տվյալ հանցագործությունների համար քրեական հետապնդում իրականացնելու հնարավորություն ունենալու համար¹⁷⁶: Ներպետական օրենսդրության համաձայն՝ անչափահաս տուժողի նկատմամբ ՀՀ քր. օր.-ի 132.2, 168, 138-142-րդ հոդվածներով նախատեսված հանցագործություն կատարած անձի նկատմամբ վաղեմության ժամկետի հաշվարկը սկսվում է տուժողի տասնութ տարին լրանալու պահից¹⁷⁷: Ինչ վերաբերում է միջազգային փորձին, ապա տարբեր երկրներում տարբեր ժամկետներ են սահմանված, օրինակ, Ֆրանսիայում՝ քսան տարի, իսկ Միացյալ Թագավորությունում՝ վաղեմության ժամկետ առհասարակ սահմանված չէ¹⁷⁸: Այսինքն համապատասխանեցման հարցը քննարկման կարիք ունի:

¹⁷⁵ Տե՛ս՝ Կոնվենցիայի 33-րդ հոդվածը:

¹⁷⁶ Տե՛ս՝ Կոնվենցիայի բացատրական գեկույցի 231-րդ և 232-ի կետերը:

¹⁷⁷ Տե՛ս՝ ՀՀ քր. օր.-ի 75-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերը: Ընդ որում վաղեմության ժամկետը սահմանված է երկու տարի՝ ոչ մեծ ծանրության, հինգ տարի՝ միջին ծանրության, տասը տարի՝ ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից և տասնհինգ տարի՝ առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից:

¹⁷⁸ Տե՛ս՝ «Ձեռնարկ խորհրդարանականների համար» Սեռական շահագործումից և սեռական չարաշահումից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան, Էջ 56 (Լանզարուտիե կոնվենցիա), Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով, 2011 թ.:

Երեխայի հետ հարցաքննությունները¹⁷⁹

Քրեական գործի շրջանակներում անչափահաս վկայի կամ տուժողի հարցաքննությունները կարգավորվում են ՀՀ ՔԴՕ-ի 76-րդ, 87-րդ, 205¹-րդ, 207-րդ, 341-րդ հոդվածներով: Չնայած այս իրավական կարգավորումներին, այնուամենայնիվ, գործող օրենսդրությունն ունի որոշ բացթողումներ: Գործող ՀՀ ՔԴՕ-ն չի անդրադառնում այնպիսի սկզբունքներին, ինչպիսիք են երեխայի լավագույն շահերը, իսկ երեխայի լավելու իրավունքը և նրա կարծիքը հաշվի առնելը դիտարկվում է այլ ապացույցների համատեքստում և գնահատվում է վերաբերելիության, թույլատրելիության և բավարարության տեսանկյունից: ՀՀ ՔԴՕ-ի նախագծի շրջանառվող տարբերակում այս հարցերի առնչությամբ որևէ էական փոփոխություն նախատեսված չէ:

Համաձայն եվրոպական լավագույն փորձի, հարցաքննության տևողությունը պետք է լինի ոչ ավել քան 40-45 րոպե, անհրաժեշտության դեպքում կարող է լինել ավելի կարճ: Հարցաքննությունը հնարավորինս պետք է անցկացնել օրվա առաջին կեսին: Հարկ է հաշվի առնել այնպիսի գործոններ, որոնք կարող են ազդել երեխայի հարցաքննության վրա կենտրոնանալու և մասնակցելու հանգամանքի վրա, ինչպիսիք են՝ քաղցածությունը, քնելու կամ դեղորայք ընդունելու ժամանակը և այլն¹⁸⁰: Համաձայն ներպետական օրենսդրության՝ անչափահաս տուժողի կամ վկաների հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ 2 ժամից ավել, իսկ օրվա ընթացքում 6 ժամից ավելի: Հարցաքննությունը թույլատրվում է շարունակել հարցաքննվող անձին հանգստի և սնվելու համար անհրաժեշտ առնվազն մեկ ժամ ընդմիջում տրամադրելուց հետո: Բացի այդ, բժշկի եզրակա-

¹⁷⁹ Տե՛ս՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածը:

¹⁸⁰ See p.-11, Child-sensitive communication and interviews, Guidelines Promoting the Human Rights and the Best Interests of the Child in Transnational Child Protection Cases (Addendum), Daja Wenke, December 2016. See also pp.10-15, Preparing the child for the interview; Who conducts the interview; Interviewer's appearance; Location of the interview; Interview settings; Participants in the setting; Interpreters; Timing and time frame; Possible challenges.

ցության հիման վրա քննիչը կարող է սահմանել ավելի կարճ ժամկետներ:

Չնայած այս օրենսդրական կարգավորման քննիչների կողմից սեռական շահագործման կամ սեռական բռնության ենթարկված երեխաների հարցաքննությունը գործնականում կարող է տևել ավելի կարճ՝ ելնելով երեխայի տարիքից և զարգացվածության աստիճանից: Մասնավորապես՝ անչափահասների գործերով մասնագիտացված 21 քննիչի ներկայացվել է, որ հարցաքննությունը կարող է տևել նախադպրոցական տարիքի անչափահասների դեպքում՝ չգերազանցելով 25 րոպեն, կրտսեր դպրոցական տարիքի դեպքում՝ 30 րոպեն, միջին դպրոցական տարիքի դեպքում՝ 45 րոպեն, իսկ ավագ դպրոցական տարիքի դեպքում՝ 1 ժամը: Չկան իրավական կարգավորումներ և ընթացակարգեր, որոնք նպատակաուղղված են բացառելու երեխայի երկրորդային զոհացումը, սակայն գործնականում համապատասխան հմտությունների ձեռքբերման առումով իրականացված 21 քննիչի վերապատրաստումը մասնակի է կարգավորում այս հարցը: Օրենսդրորեն կարգավորված չեն Կոնվենցիայով նախատեսված նաև մի շարք պահանջներ, ինչպիսիք են երեխայի համար հարմարեցված հարցաքննության սենյակները, որոնք << քննչական կոմիտեի մարմիններից և ստորաբաժանումներից ունեն միայն 20-ը՝ << քննչական կոմիտեի նախաձեռնությամբ¹⁸¹: Դատարանում հարցաքննության համար հատուկ սենյակներ առհասարակ չկան, ավելին չկա երեխաների համար հարմարեցված կահույք՝ փոքր աթոռ, ամբիոնի հարմարեցում և այլն: Նոր ՔԴՕ-ի նախագծով, ինչպես նաև գործող օրենսգրքում լրացում կատարելու մասին օրենքով կարգավորվել է, մասնավորապես, անչափահասի մասնակցությամբ քննչական գործողության կատարմանը հոգեբանի որակավորում ունեցող անձանց¹⁸² ներգրավումը:

¹⁸¹Այդ սենյակներում բացակայում են տեխնիկական միջոցներ, որոնք հնարավորություն կընձեռեն տեսաձայնագրել անչափահասի հարցաքննությունը:

¹⁸² Տե՛ս՝ ՔԴՕ-ի 212-րդ հոդվածի 1-ին մասը:

Այսպիսով, Կոնվենցիայի վավերացման դեպքում, անհրաժեշտ է ներպետական օրենսդրությունը համապատասխանեցնել Կոնվենցիայի պահանջներին, ինչպես նաև անչափահասների արդարադատության ամբողջական համակարգի ստեղծումը՝ ոլորտի միջազգային չափորոշիչներին¹⁸³:

Հարցազրույցների մասնակիցների մի մասը նշել են, որ վերջին տարիներին դրական միտում է նկատվում և որ քննչական գործողություններում երեխաների հարցաքննությունների ժամանակ ներգրավվում են հոգեբաններ, սակայն ինչը պարտադիր բնույթ չի կրում և մասնագետների ներգրավվածությունը միշտ չէ, որ ապահովված է, հատկապես մարզերում: Հոգեբանների ներգրավումն իրականացվում է տեղական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում: Պետությունը հատուկ ֆինանսական միջոցներ չի հատկացնում մասնագետների ներգրավման համար, ինչի արդյունքում հոգեբանները ներգրավվում են իրենց ցանկությամբ: Նաև կարևորվեց որակավորված հոգեբանի, այլ ոչ մանկավարժի ներգրավվածությունը: Այս գործընթացը մասնակի կարգավորված է ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կրթության և գիտության նախարարության բանավոր պայմանավորվածությամբ: Մասնակիցների կողմից նշվեց նաև, որ երեխաների համար նախատեսված դատավարական, քննչական գործընթացների, ներգրավված մասնագետների դերի, իրենց իրավունքների և պարտականությունների, բողոքարկման մեխանիզմների, տրամադրվող աջակցության և այլ ծառայությունների մասին բացատրական նյութեր չկան: Մասնակիցները նշել են, որ «Արևամանուկ» հիմնադրամը թարգմանել է երեխայի հետ հարցազրույցի վարման արձանագրության NICHD¹⁸⁴ մոդելը:

¹⁸³Տե՛ս՝ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների հանձնաժողովի «Ամփոփիչ դիտարկումները ՀՀ երրորդ և չորրորդ համատեղ պարբերական զեկույցի վերաբերյալ», 2013 թ., 53-րդ կետը:

¹⁸⁴ International Evidence-Based Investigative Interviewing of Children. NICHD և ABIT գործիքները, որպես երեխայի հետ հարցազրույցի վարման արձանագրության

Գործող իրավակարգավորումների համաձայն՝ տուժող կամ վկա երեխայի հետ տարված հարցաքննության ձայնագրումը հնարավոր է, սակայն ոչ պարտադիր:

Համաձայն Կոնվենցիայի, երբ տուժողի տարիքն անորոշ է և հիմքեր կան ենթադրելու, որ տուժողը երեխա է, մինչև նրա տարիքի որոշումը, պետք է կիրառվեն երեխաների համար սահմանված պահանջները: Թեև ներպետական օրենսդրությամբ նախատեսված են որոշ ընթացակարգեր (որոնք կիրառելի են ոչ դատավարական կարգավիճակ ունեցող երեխաների համար)¹⁸⁵ այն դեպքերի համար, երբ երեխայի տարիքն անորոշ է, այնուամենայնիվ վերոնշյալ կարգավորումը և մի շարք այլ ընթացակարգեր, օրինակ ինչպիսիք են՝ երեխայի տարիքի գնահատման ընդունելի/երեխայազգայուն մեթոդները, ուղղորդումը, ընթացակարգային երաշխիքները, բավարար չեն կարգավորված: Բոլոր այն դեպքերում, երբ անձի տարիքը հայտնի չէ, վարույթ իրականացնող մարմինը նշանակում է դատաբժշկական փորձաքննություն՝ տարիքը պարզելու համար¹⁸⁶: *Հերևաբար անհրաժեշտություն է առաջնում վերանայելու ներպետական օրենսդրությունը և այն համապատասխանեցնելու ոլորտի միջազգային չափանիշներին*¹⁸⁷:

Խնդրահարույց է նաև գործող ՀՀ ՔԴՕ-ի 76-րդ հոդվածը, քան-

լավագույն մոդելներ կիրառվում են տարբեր երկրների կողմից: See pp.9-17, Child-sensitive communication and interviews, Guidelines Promoting the Human Rights and the Best Interests of the Child in Transnational Child Protection Cases (Addendum), Daja Wenke, December 2016.

¹⁸⁵ ՀՀ կառավարության որոշումը «Երեխայի տարիքը որոշող հանձնաժողովի կազմն ու լիազորությունները հաստատելու և ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի N 995-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»:

¹⁸⁶ Հարկ է նշել, որ երեխայի պաշտպանության միջազգային չափորոշիչներին համապատասխան դատաբժշկական փորձաքննությունը պետք է դիտվի որպես վերջին միջոց և կիրառվի խիստ սահմանափակ դեպքերում:

¹⁸⁷ See “Age assessment: Council of Europe member states’ policies, procedures and practices respectful of children’s rights in the context of migration” Report, Council of Europe, 2017.

զի հաշվի չի առնված այն հանգամանքը, երբ երեխայի ծնողը(ները) կամ նրա խնամքն իրականացնող անձը (անձինք) կարող են ներգրավված լինել երեխայի նկատմամբ սեռական շահագործման կամ սեռական բռնության մեջ: Հարցը մասնակի կարգավորված է նույն հոդվածի 2-րդ մասով, երբ տուժող երեխան ունի երկու ծնող և երբ նրանք համաձայնության չեն գալիս, թե նրանցից ով պետք է լինի օրինական ներկայացուցիչ, ապա որպես օրինական ներկայացուցիչ մասնակցող անձին ընտրում է դատախազը կամ դատարանը:

Եթե սեռական բռնություն իրականացնողը միակ ծնողն է և նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը, ապա ՀՀ ՔԴՕ-ի 140-րդ հոդվածի համաձայն՝ անչափահասի առանց հսկողության, խնամքի և գոյատևման միջոցների մնալու դեպքում, այդ անչափահասներն ունեն խնամքի իրավունք, որը վարույթ իրականացնող մարմինը պարտավոր է ապահովել պետական բյուջեի միջոցների հաշվին: Քրեական վարույթն իրականացնող մարմնի հանձնարարությունները՝ կազմակերպելու վերոհիշյալ անձանց հսկողությունը և խնամքը սոցիալական օգնության պետական կազմակերպությունում կամ բժշկական հաստատությունում, պարտադիր են խնամակալության և հոգաբարձության մարմնի, ինչպես նաև նշված կազմակերպությունների և հաստատությունների ղեկավարների համար: Քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի օրինական ներկայացուցիչ ճանաչելու նաև անչափահասի ազգականին՝ վերջիններիս համաձայնությամբ:

Ինչպես տեղեկացանք հարցազրույցների ժամանակ գործնականում իրականացվում է առանց խնամքի մնացած անչափահասներին ինչպե՛ս ազգականների, այնպե՛ս էլ խնամակալության և հոգաբարձության մարմինների հսկողության հանձնելու դեպքեր:

Հերևաբար անհրաժեշտ է վերանայել ՀՀ գործող օրենսդրությունը օրինական ներկայացուցչին բացարկելու և այլ ներկայացուցիչ նշանակելու ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև հոգեբանների մասնակցությունը պարտադիր դարձնելու համար:

Քրեական դատավարությունները¹⁸⁸

ՀՀ-ում դատավորները, դատախազները և քննիչները մասնագիտական վերապատրաստումներ անցնում են Արդարադատության ակադեմիայում, ինչի մասին արդեն ներկայացվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածը մեկնաբանելիս, իսկ փաստաբանների համար վերապատրաստման դասընթացներ կազմակերպում է ՀՀ փաստաբանների պալատը: Սակայն երեխայի իրավունքների վերաբերյալ դասընթացները չեն կրում պարբերական բնույթ, և ոչ բոլոր մասնագետներն են ներգրավվում այդ դասընթացներին:

Դատավորի կողմից հանրության բացակայությամբ որոշումներ կայացնելու համատեքստում ներպետական օրենսդրությունը համահունչ է դռնփակ դատական վարույթ անցկացնելու վերաբերյալ Կոնվենցիայի պահանջին: Համաձայն ներպետական օրենսդրության, անչափահասների պաշտպանության նպատակով դատական վարույթը կամ դրա մի մասն օրենքով սահմանված դեպքերում և կարգով դատարանի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ, իսկ երեխայի անձնական տվյալներ պարունակող դատական ակտերը դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվում են ապանձնավորված կարգով¹⁸⁹ կամ առհասարակ լինում են փակ՝ «դուք իրավասու չեք դիտել այս գործը» գրառությամբ: Ըստ հարցազրույցների մասնակիցների, երեխայի մասնակցությամբ դատական

¹⁸⁸ Տե՛ս՝ Կոնվենցիայի 36-րդ հոդվածը:

¹⁸⁹ Տե՛ս՝ ՀՀ դատական օրենսգրքի 11-րդ հոդվածի 2 և 10-րդ մասերը (ընդունվել է 2018 թվականի փետրվարի 7-ին): Տե՛ս նաև՝ ՀՀ ՔԴՕ-ի 16-րդ հոդված-ի 2-րդ և 7-րդ մասերը: Ինչպես նաև նույն տեղում՝ 16-րդ հոդվածի 6-րդ մասը՝ «Գործը կամ դրա մի մասը դռնփակ նիստում քննելու դեպքում դատական նիստին իրավունք ունեն ներկա լինելու դատական նիստերի քարտուղարը, դատական կարգադրիչները, դատավարության մասնակիցները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ընթերական, թարգմանիչը, մասնագետը, փորձագետը և վկան: Նշված անձինք դատարանի կողմից ստորագրություն վերցնելու միջոցով նախազգուշացվում են օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունները հրապարակելու և սահմանված կարգի խախտմամբ օգտագործելու համար պատասխանատվության մասին»:

նիստերն անցնում են հիմնականում դռնփակ, սակայն խնդիրներ են արձանագրվել երեխայի անձնական տվյալներ պարունակող որոշ դատական ակտեր դատական տեղեկատվական համակարգի կայքում /datalex.am/ հրապարակելու առումով:

Ինչ վերաբերում է Կոնվենցիայի այն պահանջին, որ տուժողին կարողանան լսել դատարանի դահլիճում հեռակա կարգով, մասնավորապես համապատասխան հաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործման միջոցով (տեսակոնֆերանս)¹⁹⁰՝ առանց ենթադրյալ հանցագործի հետ անմիջական շփման, ապա այս պահանջը կարգավորված չէ՝ ո՛չ օրենսդրական առումով, ո՛չ գործնականում: ՀՀ ՔԴՕ-ի նախագծում ամրագրված է տեսաձայնագրման կիրառումը, սակայն այն դեռ լրամշակման կարիք ունի և պետք է համապատասխանեցվի թե՛ օրենսդրական, թե՛ տեխնիկական պահանջներին:

Հարցազրույցների մասնակիցները նշել են, որ անհրաժեշտ է բարելավել երեխաների համար դատական համակարգի մատչելիությունը և դարձնել այն ավելի երեխայազգային: Մասնակիցները նշել են նաև, որ ընդհանուր առմամբ, ներպետական օրենսդրությունն ունի բացեր՝ այն զոհակենտրոն չէ, հարմարեցված չէ երեխայի կարիքներին և չի համապատասխանում ոլորտի միջազգային չափանիշներին:

Լանզարոտեի հանձնաժողովը կոչ է անում կողմերին հաշվի առնել ԵԽ նախարարների կոմիտեի 2010թ.-ի ուղենիշները երեխայակենտրոն/երեխայանպաստ (child-friendly) արդարադատության մասին¹⁹⁰:

Հարկ է նշել, որ այս խնդրին անդրադարձել է նաև Երեխաների իրավունքների հանձնաժողովը՝ կոչ անելով պետությանը ձեռնարկել համապատասխան իրավական և այլ միջոցներ հանցագործության վկա և հանցագործությունից տուժած երեխաների իրավունքների պաշտպանության ուղղությամբ՝ հաշվի առնելով վերը նշված կատե-

¹⁹⁰Տե՛ս՝ <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016804b2cf3>(վերջին անգամ դիտվել է 08.05.2018թ.):

գորիայի երեխաների մասնակցությամբ անցկացվող գործերի շրջանակում արդարադատության իրականացման ՄԱԿ-ի ուղենիշները¹⁹¹:

Ներկաբար ՀՀ ՔԴՕ-ն վերանայման կարիք ունի երեխայազգայուն մոտեցումների նախատեսման համատեքստում, մասնավորապես՝ դատարանի դահլիճում հեռակա կարգով, հատկապես համապատասխան հաղորդակցման տեխնոլոգիաների օգտագործման իրավական հիմքերի ստեղծման հարցում:

Եզրակացություններ

Հայաստանի կողմից Լանզարոտեի կոնվենցիայի վավերացումն անխուսափելիորեն հանգեցնելու է որոշակի իրավական և իրավակիրառ փոփոխությունների:

Լանզարոտեի կոնվենցիան սահմանում է մի շարք կանխարգելիչ գործողություններ, պահանջում է լրացուցիչ միջոցներ ձեռնարկել զոհերի պաշտպանության և հանցագործների պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ, ինչպես նաև պահանջում է քրեականազանել երեխայի հանդեպ սեռական շահագործման և սեռական չարաշահման բոլոր ձևերը՝ թե՛ ընտանեկան միջավայրում, թե՛ այլ միջավայրում և նախատեսում է ավելի համապարփակ ու ընդգրկուն սահմանումներ: Կոնվենցիան նպաստում է նաև միջազգային համագործակցությանը, ինչպես նաև փորձի ու տեղեկատվության փոխանակմանը: Կոնվենցիայով նախատեսված է կողմերի ներկայացուցիչներից կազմված կոլեգիալ մարմին՝ Հանձնաժողով, որի նպատակն է վերահսկել Կոնվենցիայի իրականացումը և աջակցել պետությունների միջև տեղեկատվության, փորձի և առաջադեմ գործընթացների հավաքագրմանը, վերլուծությանը և փոխանակմանը:

Կատարված հետազոտությունը նախանշում է որոշակի առա-

¹⁹¹Տե՛ս՝ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների հանձնաժողովի «Ամփոփիչ դիտարկումները ՀՀ երրորդ և չորրորդ համատեղ պարբերական զեկույցի վերաբերյալ», 2013 թ., 53-54 կետեր:

ջարկությունների իրագործում, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի՝ իրավական, քաղաքականության և կազմակերպչական, իսկ այն միջոցառումները, որոնց իրագործման համար անհրաժեշտ կլինի վերը նշված խմբերի առնվազն երկուսի համադրությունը ներկայացվելու են որպես համակցված կամ խառը խմբի առաջարկություններ:

Առաջարկություններ

Սույն բաժնով նախատեսված իրավական ակտերում փոփոխություն կամ լրացում կատարելու կամ որևէ միջաջառում(ներ) ձեռնարկելու վերաբերյալ առաջարկությունները հասցեագրված են թե՛ պետական մարմիններին¹⁹², թե՛ երեխաների պաշտպանությամբ զբաղվող քաղաքացիական հասարակությանը, իսկ որոշ դեպքերում նաև գործարար միջավայրի ներկայացուցիչներին:

Իրավական բնույթի առաջարկություններ.

Անհրաժեշտ է՝

1. Վերանայել ՀՀ ԸՕ-ի 10-րդ և 11-րդ հոդվածները, քանի որ երեխայի ամուսնությունը կամ վաղ ամուսնությունը դիտվում է որպես երեխայի իրավունքների ոտնահարում և ազգային օրենսդրությամբ դա նախատեսելը հակասում է միջազգային օրենսդրությանը:
2. Նախատեսել տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներից օգտագործման և դրանց անվտանգության հետ կապված օրենսդրական կարգավորումներ՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը և համացանցի կիրառման ոլորտների ընդգրկվա-

¹⁹²Որպես առաջարկությունների հասցեատերեր անվանական գերատեսչություններ, մարմիններ կամ կազմակերպություններ չեն նշվել՝ հաշվի առնելով այն, որ դրանց նախաձեռնությամբ հանդես կարող են գալ թե՛ պետական մարմինների, թե՛ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները:

ծուփյան ընդլայնումը:

3. Վերանայել «բռնություն» եզրույթն այնպես, որ այն արտացոլի երեխաների նկատմամբ բռնության բոլոր հատկանիշները և առանձնահատկությունները:
4. ՀՀ օրենսդրությամբ սահմանել «երեխայի մարմնավաճառություն», «մանկական պոռնոգրաֆիա» և «պոռնոգրաֆիկ ներկայացումներ» եզրույթները՝ տարընթերցումներից խուսափելու և միասնական պրակտիկա ձևավորելու նպատակով:
5. ՀՀ քր. օր.-ի 263-րդ հոդվածով քրեականացնել երեխայի պոռնոգրաֆիայի առաջարկելը, մատչելի դարձնելը/մուտք տրամադրելը, փոխանցելը, ձեռքբերելը, ու տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների միջոցով երեխայի պոռնոգրաֆիային դիտավորությամբ մուտք գործելը:
6. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով նախատեսել անվճար իրավաբանական օգնության տրամադրում սեռական բռնության զոհ կամ վկա հանդիսացող երեխայի համար:
7. ՀՀ ՔԴՕ-ով նախատեսել այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են՝ երեխայի լավագույն շահերը, երեխայի լավելու իրավունքը և նրա կարծիքը հաշվի առնելը՝ դրանով ապահովելով երեխայի արդյունավետ մասնակցությունը քրեական դատավարության ցանկացած փուլում:
8. Լրամշակել ՀՀ ՔԴՕ-ի 76-րդ հոդվածը՝ հաշվի առնելով բացարկելու հիմքեր այն դեպքում, երբ երեխայի ծնողը(ները) կամ նրա խնամքն իրականացնող անձը (անձինք) կարող են ներգրավված լինել երեխայի նկատմամբ հանցագործության, մասնավորապես սեռական շահագործման կամ սեռական չարաշահման մեջ՝ հստակեցնելով այլ օրինական ներկայացուցիչ նշանակելու գործընթացը:
9. Վերանայել ՀՀ քր. օր.-ը և ՀՀ ՔԴՕ՝ Երեխայակենտրոն/երեխայանպաստ (child-friendly) արդարադատության մասին ԵԽ Նախարարների կոմիտեի 2010թ. ուղենիշներին համահունչ լրացումներ իրականացնելով:
10. Վերանայել ՀՀ քր. օր.-ի 142-րդ հոդվածը այն համատեքստում,

որ նրանում արտացոլվի «գրումինգ» եզրույթի բոլոր հատկանիշները՝ դրանով դարձնելով «գրումինգը» քրեորեն պատժելի նաև Հայաստանում:

11. Վերանայել ՀՀ ՔԴՕ-ն՝ պարտադիր դարձնելով տուժող կամ վկա երեխայի հարցաքննության տեսաձայնագրումը և հոգեբանի ներգրավումը:
12. Վերանայել երեխայի տարիքի գնահատման ընթացակարգերը՝ հիմք ընդունելով ԵԽ փաստաթղթերով ձևավորված լավագույն փորձը:

Քաղաքականության բնույթի առաջարկություններ.

Անհրաժեշտ է՝

1. Քայլեր ձեռնարկել սեռական շահագործման և սեռական չարաշահման վերաբերյալ կապված վտանգների, այդ թվում նաև տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների օգտագործմամբ կատարվող վտանգների մասին, ինչպես նաև պաշտպանության միջոցների և աջակցության ստանալու մասին երեխաների իրազեկման ուղղությամբ:
2. Խթանել երեխաների մասնակցությունը քաղաքականության մշակման, ընդունման, իրականացման և մշտադիտարկման գործընթացներում՝ նրանց կարծիքը դարձնելով լսելի իրենց վերաբերող հարցերում:
3. Վերանայել երեխայի իրավունքների եռաստիճան համակարգը, մասնավորապես երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի կարգավիճակը, խնամակալության և հոգաբարձության մարմինների և հանձնաժողովների դերը, նրանց ներկայացվող պահանջները, գործառույթները և այլն:
4. Ներդնել երկարաժամկետ և ընդլայնել կարճաժամկետ աջակցության տրամադրող ծառայությունները, որոնք տարաբնույթ ծառայություններ կառաջարկեն սեռական բռնության ենթարկված երեխաներին և նրանց ընտանիքներին:

Կազմակերպչական բնույթի առաջարկություններ.

Անհրաժեշտ է՝

1. Իրականացել հասարակության իրազեկվածության բարձրացմանն ուղղված քարոզարշավներ՝ երեխայի նկատմամբ սեռական շահագործման և սեռական չարաշահման ու կիրառելի կանխարգելիչ միջոցառումների մասին:
2. Ձեռնարկել խտրականության վերաբերյալ իրազեկության բարձրացմանն ուղղված կրթական և վերապատրաստման ծրագրեր և քարոզարշավներ երեխայի հետ աշխատող մասնագետների և հասարակության համար:
3. Վերահսկողություն սահմանել երեխաների հետ կանոնավոր շփումներ ունեցող մասնագետների նկատմամբ, այդ թվում՝ երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող պետական հաստատությունների, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անդամների, բուժաշխատողների, հասարակական կազմակերպությունների և բարեգործական կառույցների աշխատակիցների և կամավորների համար՝ երաշխավորելու, որ նրանք դատապարտված չեն եղել երեխաների սեռական շահագործման կամ սեռական չարաշահման համար:
4. Վերապատրաստումներ իրականացնել երեխաների հետ շփումներ ունեցող մասնագետների, մասնավորապես՝ դատավորների, դատախազների, քննիչների, ոստիկանների, փաստաբանների, ուսուցիչների, աջակցության կենտրոնների, ապաստարանների, թեժ գծերի աշխատակիցների, խնամակալության և հոգաբարձության մարմինների և հանձնաժողովների անդամների, մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության բաժինների աշխատակիցների համար՝ հատկապես երեխաների սեռական շահագործման և սեռական չարաշահման խնդիրների, դրանց հետևանքների, երեխաների կողմից տրվող հնարավոր ազդանշանների, երեխայի լավագույն շահերի, երեխայի մասնակցության և երեխայի լսվելու իրավունքի կիրառման,

անչափահասների արդարադատության, ուղղորդման մեխանիզմների վերաբերյալ:

5. Մշակել մեթոդական ուղեցույցներ կամ ձեռնարկներ երեխաների սեռական շահագործման և սեռական չարաշահման դեպքում երեխայի լավագույն շահի գնահատման և որոշման, երեխայի լավելու իրավունքի ապահովման, նման դեպքերի բացահայտման ու տուժող և վկա երեխաների, ինչպես նաև անչափահաս հանցագործների հետ տարվող աշխատանքների վերաբերյալ:
6. Խթանել համագործակցությունը մասնավոր կազմակերպությունների, մասնավորապես՝ տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների, տուրիզմի, բանկային և ֆինանսական ոլորտների կազմակերպությունների հետ, նրանց ներգրավել քաղաքականության/ուսանողական մշակման գործընթացներում և ներգրավվել խորհրդատվական մարմիններում կամ ցանցերում:
7. Ներդնել հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքներին հարմարեցված բողոքարկման և թեժ գծերից օգտվելու մեխանիզմներ:
8. Ֆինանսական միջոցներ նախատեսել քրեական դատավարությանը մասնակցող կամ հանցագործության մասին հաղորդում տվող անձանց և նրանց ընտանիքի անդամներին պաշտպանության միջոցները գործնական իրականացման համար:

Համակցված բնույթի առաջարկություններ.

1. Մշակել և ներդնել երեխաների սեռական շահագործման և սեռական չարաշահման դեպքերով երեխաների և դեպքի մասին տեղեկատվության ուղղորդման, բացահայտման և զեկուցման միասնական մեխանիզմ՝ սահմանելով այն առնվազն ՀՀ կառավարության որոշմամբ:
2. Մշակել և ներդնել հոգեբանական, բժշկական և սոցիալական միջամտության հարկադիր բնույթ չկրող արդյունավետ ծրագրեր երեխաների դեմ կատարված հանցագործությունների համար հե-

տապնդվող կամ դատապարտված անձանց նկատմամբ՝ մասնավորապես վերանայելով ՀՀ քր. օր.-ով, ինչպես նաև նախագծով նախատեսված կարգավորումները:

3. Օրենսդրական և գործնական միջոցներ ձեռնարկել, որպեսզի տուժող երեխային հնարավոր լինի լսել դատարանի դահլիճում հեռակա կարգով, մասնավորապես՝ համապատասխան հաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործման միջոցով (տեսակոնֆերանս), առանց ենթադրյալ հանցագործի հետ անմիջական շփման:
4. Նախատեսել կանխարգելիչ միջամտության ծրագրեր կամ միջոցառումներ, որոնք նախատեսված են գնահատելու և կանխարգելելու հանցագործության կատարման վտանգն/ոչսկն այն անձանց համար, ովքեր հանցագործություն կատարելու մտավախություն ունեն:
5. Մշակել և տարածել երեխայի տարիքին համապատասխան՝ մատչելի և հասանելի լեզվով բացատրական նյութեր՝ երեխայի մասնակցությամբ դատավարական, քննչական գործընթացների, ներգրավված մասնագետների դերի, իրենց իրավունքների և պարտականությունների, բողոքարկման մեխանիզմների, տրամադրվող աջակցության և այլ ծառայությունների վերաբերյալ, այդ թվում հաշմանդամություն ունեցող երեխաների համար:
6. www.datalex.am կայքէջում պաշտպանել երեխաներին վերաբերող տեղեկատվությունը՝ ՀՀ ներպետական օրենսդրության համաձայն, հաշվի առնելով միջազգային պարտավորությունները:

Օգտագործված գրականության ցանկ

Միջազգային և ազգային իրավական ակտեր

- ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա (1989թ.)
- Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությանը մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին (2000թ.)
- Աշխատանքի միջազգային կազմակերպության մանկական աշխատանքի վատթարագույն ճևերի արգելման և անհապաղ վերացման մասին թիվ 182 կոնվենցիա (1999թ.)
- Սեռական շահագործումից և սեռական չարաշահումից երեխաներին պաշտպանելու մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա և Կոնվենցիայի բացատրական զեկույցը
- Եվրոպայի խորհրդի վերանայված սոցիալական խարտիա (1996թ.)
- Կիբերհանցագործությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (2001թ.)
- Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի գործողություններին մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (2005թ.)
- Տեղական և տարածքային հասարակական կյանքին երիտասարդների մասնակցության վերաբերյալ վերանայված Եվրոպական Խարտիա
- Հանձնարարական CM/Rec(2012)2 անդամ երկրներին Նախարարների կոմիտեից երեխաների և մինչև 18 տարեկան երիտասարդների մասնակցության վերաբերյալ
- ԵԻԿ Թիվ 14 Ընդհանուր մեկնաբանություն՝ Երեխայի լավագույն շահերի վերաբերյալ
- Directive 2011/92/EU of the European Parliament and of the Council of 13 December 2011 on combating the sexual abuse and sexual exploitation of children and child pornography, and replacing Council Framework Decision 2004/68/JHA
- Joint general recommendation No. 31 of the Committee on the Elimination of Discrimination against Women
- General comment No. 18 of the Committee on the Rights of the Child on harmful practices
- ՀՀ Սահմանադրություն
- ՀՀ քրեական օրենսգիրք
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
- ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք
- ՀՀ ընտանեկան օրենսգիրք

- ՀՀ դատական օրենսգրքի
- ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք
- «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք
- «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք
- «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենք
- «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենք
- «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենք
- «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենք
- «Դատախազության մասին» ՀՀ օրենք
- «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք
- «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք
- «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք
- «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենք
- «Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենք
- «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենք
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- «Կրթության մասին» ՀՀ օրենք
- «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք
- «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը
- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք
- «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք
- ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի նիստի N51 արձանագրային որոշում Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգին և դրանից բխող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին
- ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N631-Ն որոշումը խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին
- ՀՀ կառավարության որոշումը երեխայի տարիքը որոշող հանձնաժողովի կազմն ու լիազորությունները հաստատելու և ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի N 995-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
- ՀՀ կառավարության արձանագրային որոշումը 10.03.2016թ.' կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին խնամատարության հանձնելու ընթացակարգի բարեփոխման հայեցակարգին հավանություն

տալու մասին

- ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի N 1044-Ն որոշումը միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը սահմանելու մասին
- ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 26 –ի N 551-Ն որոշում
- ՀՀ կառավարության նիստի արձանագրությունից քաղվածք՝ ՀՀ-ում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրին և երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցին հավանություն տալու մասին (13 հուլիսի 2017 թվականի N 30)
- ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշում
- ՀՀ վարչապետի որոշումը երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատելու և ՀՀ վարչապետի 2005 թվականի հոկտեմբերի 28-ի N 835-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին
- ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծ
- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծ
- «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագիծ
- «Սոցիալական աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագիծ

Հրատարակություններ

- 2015-2016 թվականների սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն ու դրանց վարույթի առանձնահատկությունները, Երևան, 2017թ.:
- Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. Համառոտ պարզաբանումներ, Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Երևան, 2016թ.:
- Օրենքի հետ առնչվող երեխաների նկատմամբ վերաբերմունքի ընդհանուր կանոններն ու առանձնահատկությունները, Թումասյան Դ. Գրավեսոն Բ. Երևան, 2016 թ.:
- Ձեռնարկ խորհրդարանականների համար Սեռական շահագործումից և սեռական չարաշահումից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (Լանգարոտիե կոնվենցիա), Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով, 2011 թ.:
- Child-sensitive communication and interviews, Guidelines Promoting the Human Rights and the Best Interests of the Child in Transnational Child

Protection Cases (Addendum), Daja Wenke, December 2016.

- Age assessment: Council of Europe member states' policies, procedures and practices respectful of children's rights in the context of migration" Report, Council of Europe, 2017.

Ջեկույցներ

- Տարեկան հաղորդում 2017 թվականի ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին:
- ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների հանձնաժողովի Ամփոփիչ դիտարկումներ ՀՀ երրորդ և չորրորդ համատեղ պարբերական զեկույցի վերաբերյալ, 2013 թ.
- ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի կատարման վերաբերյալ ՀՀ հինգերորդ և վեցերորդ համատեղ պարբերական զեկույցի ամփոփիչ դիտարկումները, 2016թ.:
- Second Implementation Report: Protection of Children against Sexual Abuse in the Circle of Trust. The Strategies, Council of Europe, Lanzarote Committee, 2018.
- Second Monitoring Round on Protecting Children against Sexual Exploitation and Abuse Facilitated by Information and Communication Technologies, Lanzarote Committee, 2017.

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպեր

A.R. and L.R. v. Switzerland (no. 22338/15), ECtHR, 19 Dec 2017

Կայքեր

<https://www.coe.int/en/web/children/lanzarote-convention>

<http://www.arlis.am>

<https://www.youtube.com/user/EUAgencyFRA/featured>

<http://safe.am>

<http://www.ombuds.am/>

<http://children.ombuds.am/>

<http://saccarmenia.org/hy/http://www.msy.am>
<https://www.weprotect.org>
<http://investigative.am/>
<http://www.ssss.am/arm/hot-line-service/>
<https://www.yerevan.am/am/hot-line/>
<https://www.e-draft.am/>
<http://nichdprotocol.com>
<http://mankutyun.am/about.php>